




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

25. 057

25. 057

ԿՈՄՅԵՐԻՏ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՏԵՐՈՒՄ

ԿԻՄ-Ի ՀԵՐՈՍՆԵՐՆ ՈՒ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ԿԱԶՄԵՑԻՆ

Բ. ՄԱՏԼԻՆ ՅԵՎ. Զ. ՎԵՅՆԲԵՐԳԵՐ

Թարգմանություն ԳՈՐ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

300

548-ՄԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒՐՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1925

25.06.2013

25057

15 JAN 2010

№ 29 ԿՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ № 29

300
2548-ՄԱ 331.91
Ե-33 mm

ԿՈՄՅԵՐԻՏ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՆՏԵՐՈՒՄ

ԿԻՄ-Ի ՇԵՐՈՍՆԵՆ ՈՒ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ԿԱԶՄԵՑԻՆ

Բ. ՄԱՏԼԻՆ ՅԵՎ Զ. ՎԵՅՆԲԵՐԳԵՐ

Թարգմանություն ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆԻ

Պետական Հրատարակչություն

Յերեվան--1925.

00
 50-8 29

ԿԻՄ-Ի ՇԵՐՈՍՆԵՐՆ ՈՒ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Այն հինգ տարին, վորոնք անցել են ԿԻՄ-ի (Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալ) հիմնավորման ուրից, միջազգային շարժման պատմության մեջ գրված են Արևելքի և Արևմուտքի յերիտասարդ բանվորների և գյուղացիների տաք արյունով: ԿԻՄ-ի հինգ տարին բանվոր և գյուղացի յերիտասարդության պայքարի տարիներն են ընդդեմ շահագործման, արևելյան և գաղութային ճնշված ժողովուրդների պայքարի տարիներն են իմպերիալիստական կապիտալիզմի ճնշումներից ազատագրվելու համար, ուստի բանվորների և գյուղացիական մասսաների հուսահատ կովի տարիներն են ընդդեմ արտաքին հակահեղափոխական ինտերվենցիայի, այն տարիներն են, յերբ համայն աշխարհի բանվոր և գյուղացի յերիտասարդությունը, չնայած կատաղի սպիտակ տերրորին և սարսափելի հալածանքներին՝ համախմբվեց Կոմմունիստական Ինտերնացիոնալի դրոշի տակ և գյուղում ու քաղաքում ստեղծեց բանվոր յերիտասարդության մասսայական կազմակերպութուն:

Կոմմունիստական յերիտասարդությունն ստիպված յեղավ տանել ռեակցիայի ծանր հարվածները: Սպիտակ տերրորի վողջ սարսափը, վոստիկանական ամենագոր հիմնարկների «հերոսական» սխրագործությունները, կապիտալիստական դասակարգային ար-

դարադատությունն ու ֆաշիստների իշխանությունը — բոլոր յերկրների կոմունիստական յերիտասարդությունն ստիպված յեղավ այս ամենը կրել իր կաշվի վրա:

Չնայած տերրորին ու ռեակցիային, Կոմյերիտմիությունը շարունակեց իր պայքարը մղել ընդդեմ կապիտալիստական կարգերի:

Դիմելով համայն աշխարհի բանվորա-գյուղացիական յերիտասարդության, քաշելով նրան պայքարի մեջ, միշտ իր դիրքում մնալով, նա պայքար մղեց ընդդեմ տերրորի, ընդդեմ ռեակցիայի: Յերիտասարդության սոցիալիստական կազմակերպությունները, վորոնք համոթ յերիտասարդական բանվորության, իրենց նույնպես անվանում են «բանվորական կազմակերպություններ» ու, ցավոք սրտի, բանվոր յերիտասարդության մեջ դեռ շատ հետևողներ ունեն, յերբեք չեն աջակցել Կոմյերիտմիության կողին ընդդեմ սպիտակ տերրորի և ռեակցիայի: Ընդհակառակը՝ նրանք հաճախ յերևան են յեկել դավաճանների ու պրովոկատորների դերում, մատնելով կազմակերպություններն ու Կոմյերիտմիության անդամներին:

Բավական է, վոր մենք մեկիկ-մեկիկ թվենք Ֆինլյանդիայի ծայրամասերում, Լեհաստանում և Բալկաններում կոմունիստների դեմ կազմած դատավարությունները. սոցիալ-դեմոկրատներն ու նրանց յերիտասարդությունը գրեթե ամեն տեղ դուրս են գալիս իբրև «դեմոկրատական» բուրժուազիայի շահերի պաշտպան և իբրև վոստիկանական կամավոր լրտեսներ: Շարունակ, յերբ պետք է բանվորական հեղափոխական շարժման դեմ դուրս գալ, յերբ անհրաժեշտ է

գրել Խորհրդային Ռուսաստանի «տերրորի» դեմ, այն ժամանակ սոցիալ-դեմոկրատները հանդես են գալիս ի պաշտպանություն բուրժուազիայի:

Նավթի արքաների շահերի համար գործող և Խորհրդային Վրաստանից վնդված մի խումբ սպիտակ-գվարդիական զենեքաւներ և աղնվականներ մոտիկ անցյալում կազմակերպեցին հակահեղափոխական դավադրություն: Յերբ վրացական բանվորների ու գյուղացիների ձեռքով ճնշվեց նրանց ապստամբությունը, սոցիալ-դեմոկրատները նորից յերևացին իրենց դիրքերում և սկսեցին վրոնալ ՍԽՀՄ կարմիր տերրորի մասին: Սա պարզ կերպով ապացուցում է, թե սոցիալ-դեմոկրատներն ու նրանց յերիտասարդությունը բարրիկադի վոր կողմն են և ում շահերի համար են աշխատում: Բանվոր յերիտասարդության պայքարի միակ կազմակերպությունն է և կմնա ԿԻՄ-ը: Այս բանը հասկացել է նաև բուրժուազիան և հենց դրա համար էլ նա իր հարվածներն ուղղում է Կոմյերիտմիության դեմ:

Չնայած տերրորին, Կոմյերիտմիությունն այս հինգ տարվա ընթացքում խիստ աճել է: ԿԻՄ ի առաջին կոնգրեսում ներկայացված էյին 14 միություն, յերկրորդում — 43, յերրորդում — արդեն 0 միություն 760 000 անդամով և չորրորդում — արդեն 1,100,000 անդամով: Վերջին հինգ տարվա ընթացքում այդ միություններից անլեգալ դրության մեջ էյին հետևյալ 23 միությունը՝

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ Կ. ՅԵ. Մ. 1923 թ. հոկտեմբերից մինչև 1924 թ. մարտ ամիսը միանգամայն անլեգալ եր: Ներկայումս կիսալեգալ է:

ՍՊԱՆԻԱՅԻ	Կ. ՅԵ. Մ.	Միանգամայն անլեզալ է:
ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ԻՏԱԼԻԱՅԻ	»	1922 թվից միանգամայն անլեզալ է:
ԱՄԵՐԻԿԱՅԻ	»	Լեզալ է դարձել 1923 թ.:
ՀԱՐԱՎ-ՍԼԱՎԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է. (Հարավ-Սլավիայի Բանվոր Յերիտասարդ. լեզալ Միու- թյունը լուծված է 1924 թ. հունիսին):
ԲՈՂԳԱՐԻԱՅԻ	»	1923 թվից միանգամայն անլեզալ է:
ՌՈՒՄԻՆԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է. (Հին Ռումինիայի Սոցիա- լիստական Յերիտասարդու- թյան Միությունը վոստի- կանության կողմից լուծված է 1923 թ. ապրիլին, ԿիՄ-ին հարելու պատճառով):
ՎԵՆԳՐԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է այն ժամանակից, յերբ 1919 թ. հունիսից հեղափոխությունը:
ԹՅՈՒՐԳԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է (լուծված է 1922 թ.):
ԼԵՀԱՍՏԱՆԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ԼԻՏՎԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ԼԱՏՎԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ԵՍՏՆԱՆԴԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է. (Եստլանդիայի Պրոլետար

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՈՒ- ԹՅՈՒՆԸ	Կ. ՅԵ. Մ.	Միանգամայն անլեզալ է. (Ֆինլանդիայի Բանվոր Յե- րիտասարդության Միու- թյունը լուծված է 1923 թ.):
ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է.
ՅԱՊՈՆԻԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ԿՈՐԵԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ՉԻՆԱՍՏԱՆԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ՄԵՔՍԻԿԱՅԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ՀՆԴԿԱՍՏԱՆԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ՀՆԴԿԱՍՏԱՆԻ	»	Միանգամայն անլեզալ է:
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ	»	Միանգամայն անլեզալ է:
Ձանազան յերկրներում լույս տեսնող թերթերից, ինչպես և կոմյերիտական ամսագրերից վերջին ժամա- նակներս միանգամայն արգելված էին 15-ը:		
Բացի դրանից, լույս ընծայվող թերթերի զրեթե ամեն համարը գրավվում է: Արգելված թերթերից բա- ժին է ընկնում՝ Հարավ-Սլավիային—3-ը, Բուլգարիա- յին—2-ը, Ռումինիային—2-ը, Լեհաստանին—4-ը, Եստլանդիային—2-ը, Ֆինլանդիային—2-ը:		
Սպիտակ տերրորը մեզնից նույնպես մարդկային բազմաթիվ զոհեր պահանջեց: Վոլինյացան այն յերկըր- ների հազարավոր բանվորներն ու գյուղացիները, ուր տեղի էին ունենում հեղափոխական ապստամբություն- ներ (որինակ՝ Գերմանիայում, Բուլգարիայում, Լե- հաստանում, Բեսարաբիայում և այլն) և այն յերկըր- ներում, վորտեղ խորհրդային իշխանությունն անգույթ		

կերպով ճնշվում եր (որինակ՝ Վենգրիայում, Ֆինլանդիայում, Լատվիայում, Լիտվայում և Եստոնիայում), վորովհետև նրանք կոչվում էին բանվոր դասակարգի ազատագրման համար: ԿԻՄ-ի նահատակների ցուցակից մենք ստորև միջանի անուններ ենք բերում: ԿԻՄ-ի դեմ ուղղված տերրորիստական ակտերի և նրա միությունների ճնշումների բոլոր դեպքերի նկարագրությունների առաջ բերելն անհնարին է այն պատճառով, վոր նրանց թվելը միայն միջանի հատոր կը պահանջեր:

Ֆինլանդիայում 1918 թ. պրոլետարական հեղափոխությունը ճնշելուց հետո «աշխատում էին» 145 քաղաքացիական և դաշտային դատաբաններ: 75575 մեղադրյալներից դատապարտվեցին 67788-ը, վորոնցից 22844-ը՝ մինչև 21 թ.:

Ընդհանուր առմամբ նրանք 300000 տարով դատապարտվեցին տաժանակիր աշխատանքների (հազարավոր հասակավոր յերիտասարդ բանվորներ առանց վորևե դատարանի մյուս աշխարհ ուղարկվեցին): Բանվոր Յերիտասարդության լեգալ Միությունը ցրելուց հետո Կ.Կ.-ի անդամներ՝ ընկ. ընկ. Նակինենը, Տուոմինենը, Տուոմին և ուրիշները դատապարտվեցին յուրաքանչյուրը 4 տարվա տաժանակիր աշխատանքի:

Ցրված բանվորական կուսակցության և յերիտ. միության ղեկավարները (219 ընկերներ միասին), նըրանց թվում և 150 մարդ յերիտասարդությունից— 1923 թվի ոգոստոսին դատի հանձնվեցին: Նրանք դատապարտվեցին 3-ից մինչև 11 տարի տաժանակիր աշխատանքների, ընդհանուր առմամբ 800 տարի տաժանակիր աշխատանքի:

Վենգրիայում հեղափոխությունը ճնշելու ժամանակ, առանց վորևե դատի, մահվան պատժի յենթարկվեցին հազարավոր յերիտասարդ բանվորներ: Բիչ ժամանակ հետո ընկերներ Մարսինը և Սենդոր Վադաը յենթարկվեցին տանջանքների և ապա սպանվեցին Կյոլենֆելդ բանտում: Հենց այդտեղ էլ յերկար տանջանքներից հետո սպանվեց ընկեր Շեբեբալսը: 67-ի հռչակավոր դատավարության ժամանակ դատարանի առաջ կանգնած էին 40 յերիտասարդ ընկերներ. նըրանցից 6-ը դատապարտվեցին 71 տարվա տաժանակիր աշխատանքի, իսկ մնացածները—յուրաքանչյուրը 2 $\frac{1}{2}$ տարով: Դատապարտվածների մեջ էին ընկերներ՝ Զիգգերը, Գրայմերը, Կաքբուրգը, Սցաբուրգը և ուրիշները. նրանք բոլորը դեռ մինչև այժմ էլ տանջվում են Վենգրիայի մութ նկուղներում:

Գերմանիայի բանտերում գտնվում են 2000-ից ավելի յերիտասարդ ընկերներ: Պոտսդամի դինվորականների դատավարության ժամանակ 1924 թ. հունիսի 20-ին պատիժ ստացան ընկ. ընկ. Դայլվենգայը —7 տարի և 100 մարկ տուգանք, Կայլերը—6 տարի և 500 մարկ, Բաուամեր—4 տարի և 400 մարկ, Լեյպոլը—5 տարի և 500 մարկ, Վիլի Շացը—6 տարի և 500 մարկ: Նույնպես և ընկ. Գրոսամեր:

Բերլինում 10-րդ Միջազգային յերիտասարդ. ցույցին բանտարկվեցին 15 ընկերներ նրա համար, վոր մասնակցել էին ցույցին: Լայպցիգում ռայկոմի քարտուղար ընկ. Ռեյնհարդ Մոնդեմ դատապարտվեց 1 $\frac{1}{2}$ տարվա բանտարկություն:

Ռուսում մեծ հաջողություն տարվող ԿԻՄ-ի ամբողջ աշխատանքները նույնպես շատ զոհեր պահանջե-

ցին: Գերմանիայի և Ֆրանսիայի կոմյերիտմիությունները միասնական գործունեությունը վոչնչացնելու համար բուրժուազիան նրան հակադրեց ֆրանսիական և գերմանական ահակցիայի համագործակցությունը: 150-ից ավելի յերիտասարդ ընկերներ ձերբակալվեցին ու ձեռնկալվեցին: Ընդհանուր առմամբ նրանք 300 տարով բանտարգելություն ղատապարտվեցին: Անցյալ տարի հոգեզալստյան տոնին ֆրանսիական պրովոկատորների կողմից գնդակահարվեց ընկ. **Դեմարեցը**: Իբրև գերմանո-ֆրանսիական ահակցիայի ուղղակի զոհերի, մենք թվում ենք յերեք ընկերներին ևս: **ԸճԿ**, **Դոսկովսկի** բանտում կախվեց, ընկ. **Զեյբալը**, շնորհիվ անտանելի պայմանների, բանտում թոքախտից մեռավ, ընկ. **Վեբերը** ֆրանսիական լրտեսներից ազատվելուց հետո հիվանդացավ հետամտություն մանիայով ու վերջ տվեց իր կյանքին...

Մայնցում բանտարկված բոլոր ընկերները տանջանքների յենթարկվեցին: Ընկեր **Սխեսեբեգի** գլխավոր գետին գցեցին նրա համար, վոր չցանկացավ խոստովանել: Ընկ. ընկ. **Բեցովիչը**, **Դիցկեն** ու **Ոյլբրիլը** դաժանորեն ձեռնկալվեցին:

1924 թ. սեպտեմբերի 15-ին Ֆրանսիայում վոստիկանություն կողմից գնդակահարվեց 17 տարեկան պատանի **Լուի Լեվոն** «Ինտերնացիոնալ» յերգելու համար: Ռուրում արած պրոպագանդի պատճառով ընկ. **Դորիոն** դատապարտվեց 16-ամսյա բանտարգելության:

Լեհաստանում հունվարի 1-ին կար 800 բանտարկյալ, նրանցից մեծ մասը յերիտասարդներ: Յերիտասարդություն թերթի խմբագիր ընկ. **Սիբակեվիչը** 10 տարով դատապարտվեց տաժանակիր աշխատանքների:

Լեհաստանի Կ. Յե. Մ. կոչերը տարածելու համար **Լորա Կեպեքը** 4 տարվա տաժանակիր աշխատանքի մատնվեց: Կոմունիստական պրոպագանդի համար մայիսի 13-ին Լոձում 12 յերիտասարդ ընկերներ դատապարտվեցին յուրաքանչյուրը յերկու տարվա բանտարգելության: 16 տարեկան ընկ. **Քերզոնի** միջանի անգամ կախեցին կեղծ ողակից: Յերբ նա գիտակցությունը կորցնում էր, նրան իջեցնում էին ու մի առ ժամանակից հետո կրկին կախում: Նրա գլխին այդ «փորձերը» խաղացին, վորպեսզի խոստովանեցնեն: Ընկ. **Ենգելի** **Լեհաստանի** դաշտային դատարանը մահվան դատապարտեց: Մահվան դատավճիռն ի կատար ածվեց 16 ժամից հետո: Միմիայն նրա համար, վոր ընկ. ընկ. **Դեբելացկի** յեվ **Լեվիքը** ձեռնկալվեցին այն դուռը, վորտեղ տեղի յեր ունենում անխզալ խորհրդակցություն, Լոձի զինվորական դատարանում նրանք դատապարտվեցին 6 տարվա բանտարգելության:

Հազարավոր յերիտասարդ ընկերներ այսոր տանջվում են **Խալիայի** ֆաշիստական բանտերում: Փաշիստական ղեկատուության ժամանակ գազանարար սպանվեցին հազարավորները: Միլանում յերկու գիշերվա ընթացքում մահվան պատժի յենթարկվեցին կոմյերիտմիության 32 ղեկավարներ: Ընկ. **Ք. Յեռալի** **գընդակահարեցին** փողոցում: Ընկ. ընկ. **Բերեն**, **Անոն**, **Յորիզանեն**, **Ո. Ֆազաբիլի**, **Ի. Սկալիքը** սպանվեցին ֆաշիստների ձեռքով:

Սեպտեմբերյան ապստամբություն ժամանակ Բուդապեշտում սպանեցին Կ. Յե. Մ. միջանի հազար անդամների: Ապստամբությունը լիկվիդացիա անելուց հետո նրանց, ում ձերբակալել էին ղենքը ձեռ-

քին, բոլորին ել սպանեցին: Այսպիսով գնդացիներով գնդակահարվեցին 200 մարդ: Գիմնազիայի վերջին դասարանի 16 աշակերտ Բաղարշիկում նույնպես վոչնչացան թնդանոթի կրակով: Սպանվեցին՝ Բաղարշիկի Կոմյերիտմիության քարտուղար՝ Կիրիլ Պոպովը, Կարա Մուսսալի կոմյերիտմիության քարտուղար ընկ. Չոբալույեվը, Բոլնա Բենիայի Կոմյերիտմիության քարտուղար ընկ. Խայիմ Լեվին, կամավոր գթության քույրեր՝ ընկ. ընկ. Վերա Դամյանովան ու Կասիա Սպասովան և ուրիշները: Վերջերս տեղի ունեցան նոր ձերբակալություններ, և մեր յերիտասարդ ընկերներից շատերը դեռ մինչ այժմ ել գտնվում են ֆաշիստական Բոլգարիայի բանտերում:

Յերիտասարդ կոմունիստներին հետ հաշիվը մաքրելու համար անցյալ տարի յապոնական կառավարությունն ոգտագործեց յերկրաշարժը: Յապոնիայի կոմյերիտմիության քարտուղար ընկ. Շուսուրա Կավայը դադանաբար սպանվեց: Նույնպես վարվեցին նաև ընկ. ընկ. Յամագայի, Չուգիի, Կասաօկայի, Լուցուի Մայեայի, Կոնգո Խիրոգոյի և Սագոյի հետ, վորոնք բոլորն ել Յապոնիայի Կոմյերիտմիության Կ. Կ. անդամներ են:

Ռուսների թաստերում գտնվում են շատ յերիտասարդ ընկերներ: Նրանց մեջ—ընկ. ընկ. Շուսանը, Ռոնը և ուրիշները: Նորերս բանտից ազատվեց ընկ. Լեոնուցա Ֆիլիպպովիչն, վոր բանտարկված եր իր գրած հոդվածի համար:

Շուսոնիայում բանտարկված են մոտավորապես 300 յերիտասարդ ընկեր: Անցյալ տարի մարտ ամսին փողոցում պրովոկատորը գնդակահարեց միության

քարտուղար ընկ. Յան Կեռուկսին: Ընկ. ընկ. Պրուուլին, Նյուսեբերգը, Յելմանը, Մորգենզոնը դատապարտվեցին 64 տարվա տաժանակիր աշխատանքների: Ընկ. ընկ. Լաուրիսկին, Ռեմզելեպը, Վաարմանը, Այլոնը և ուրիշները դատապարտվեցին 80 տարվա տաժանակիր աշխատանքների: Նախնական կալանքի աակ են գտնվում մոտավորապես 60 ընկեր, վորոնց Եստոնիայի Կոմյերիտմիությանը պատկանելու համար մոտ ժամանակներս կանգնեցնելու յեն դատարանի առաջ: Կ. Յե. Մ. Կոչը տարածելու համար ընկ. Նոուրկը հավիտենական տաժանակիր աշխատանքի դատապարտվեց:

Լիեվայում Կոմյերիտմիության մասնակցելու համար դատապարտում են 10—15 տարվա բանտարգելության, նույնիսկ մահվան պատժի: Կոմյերիտմիության մասնակցելու համար ընկ. Բ. Ռակովսիկը մահվան դատապարտվեց: Հետո մահվան պատժը փոխվեց հավիտենական տաժանակիր աշխատանքներով:

Հակամիլիտարիստական գործողության համար Սմերկայում յերիտասարդության բանվոր միության քարտուղար ընկ. Կրուզոն միքանի տարվա բանտարգելության դատապարտվեց:

Ամենուրեք, վոր կողմ նայես,—կապիտալիստական բանտեր, տաժանակիր աշխատանք, մահվան պատժ: Կապիտալիստական յերկրներում ամենուրեք սպիտակ տերերն ե իշխում: Նա մեր շարքերից խլում ե լավագույն ընկերներին, սպանում ե նրանց կամ յերկար տարիներով բանտերը նետում: Յերիտասարդ բանվորներին ամեն մի քայլը թանգ ե նստում:

Սոցիալ-դեմոկրատներն այդ չեն տեսնում: Նրանք տեսնում են միայն այն, վոր հեղափոխական բան-

վորներն ու գյուղացիներն իրենց դատավճիռն են կարգում հակահեղափոխականներին, միապետականներին և նավթի արքաների գործակալներին գլխին: Մենք հարց ենք տալիս այդ պարոններին՝ «Կայեն, մեր և քո յեղբայր Աբելը»: Սոցիալ-դեմոկրատներ, մեր եյիք դուք այն ժամանակ, յերբ ռեակցիան ջնջում էր բանվորներին ու գյուղացիներին:

Սրան միայն մի պատասխան կա. — Այն ժամանակ սոցիալ-դեմոկրատները ռեակցիայի կողմն էյին, այն ժամանակ սոցիալ-դեմոկրատները կապիտալիստական ավազակներին ծառայում էյին իբրև գործակալներ: Նախատինք սոցիալ-դեմոկրատիային:

Փանք կոմմունիզմի համար ընկած յերկտասարդ հերոսներին:

Ռ. ՄԵՐԻՆԳ,

Յերկտասարդության կոմիտեիցին

Գործկոմի անդամ:

ԳԵՐՄԱՆԻԱ

ԶՈՀԵՐ, ԶՈՀԵՐ, ԶՈՀԵՐ...

Լայպցիգի քաղաքացիական դատարանի առաջ կանգնեցին յերկու յերկտասարդ ընկեր, ամեն մեկը 18 տարեկան՝ Վերներ Ֆելսեր և Ուտտ Գրոնհեգեր:

Ուղարկության ժամանակ Շտուտգարտի լրտեսներն ընկ. Ֆելսերի մոտ գտան «հակապետական, համաբիրկտարիստական թուլցիկներ: Իսկ Գրոնինգերի մոտ իբր թե գտան մի զույգ փամփուշտ և յերկու ռումբ:

Յշտները դատապարտվեց 1 տարի բանտարգելության և 50 մարկ տուգանքի, իսկ Գրոնինգերը՝ 9 ամիս բանտարգելության և 50 մարկ տուգանքի:

ԵՆԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՐԴԱՌԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ԶՈՀԵՐ.

Ամեն ուր կոմմունիստների դեմ նորանոր դատավարություններ են սկսվում: Ծառայելու միշտ պատրաստ, Ստիննեսի հանրապետության մասը ու խոշոր գործակալները՝ դատախազները, կոմիսարներն ու լրտեսները ներքին գործոց մինիստր Յաբեսի հրամանին են սպասում, վորպեսզի անխնա հաշվեն ու ղրկաթափ անեն Գերմանիայի Կոմ. կուսակցությունը և Գերմ. Կ. Յե. Մ.-ը:

Լայպցիգի արդարադատութիւնը Գ. Կ. Յեր. Մ. լավագոյն ընկերներէ միջից նորից զոհեր պահանջեց— Շտուտգարտի ընկերներ Ֆրից Ռաուլից, Կարլ Շրաւսից և Այլֆրեդ Եյլսթեյն: Նրանք մյուս ընկերներէ հետ միասին դեկտեմբեր ամսին ձերբակալուեցին Շտուտգարտի շէնքերէց մեկում: Այդ աջ ժամանակ, յերբ խորհրդակցում էին բանտարկյալներէ և նրանց ընտանիքներէ ծանր կացութեան մասին: 9 ամսից ավել է, ինչ նրանք տառապում են բանտում:

Արդարադատութիւնը մեծ աշխատանք թափեց, մինչև վոր «պետական դավաճանութեան» պրոցեսս ստեղծեց:

Կալիտալիտական հասարակութեան կեղծիքները յերբեք այնպէս պարզ կերպով յերևան չէին յեկեղ, ինչպէս այդ պրոցեսսում: Քննիչ Բրյունները յերդումը խախտեց: Հինգ «մեղադրյալներն» ու «վկաները» լճատեսներ դուրս յեկան: Իբրև «ընկերներ» նրանց նստեցրել էին կալանավորների կամերաներում, վորպէսզի նրանց միջոցով վորեւ բան իմանային, սակայն այդ ել չոգնեց:

Բայց պ. Յարեսը հրամայեց— ու չնայած լրտեսներին և Բրյունների, Բախովերի, Բերգի, Կյոնիգի և Դիպերի կեղծ ցուցմունքներին, և առանց հաշիւ առնելու այն, վոր մեղադրանքն ինքնին հոգս ցնդեց, մեր ընկերները դատապարտուեցին:

Ֆրաասը՝ 21½ տարւա բանտարկութեան ու 200 մարկ տուգանքի, Ռաուն 1 տարի բանտարկութեան և 100 մարկ տուգանքի, և նույնը Եյլսթեյնի համար: Վորովհետև նրանք կոմունիստներ էին, վորովհետև նրանք պետք է դատապարտուէին:

«Թե դատարանն ինձ ինչպէս կդատապարտի, այդ միեւնոյն է ինձ համար. իմ ընկերների հետ միասին յես տառապել եմ, և յեթե հանգամանքներն այդ պահանջում են, յես պատրաստ եմ տուժել իմ համոզմունքների համար, թեկուզ հարկ լինի ելի բանտ ընկնելու» (Ֆրաաս):

«Յես պարծենում եմ նրանով, վոր այստեղ դատաբանի առաջ եմ կանգնած իմ համոզմունքների համար: Բանվորների հայտնի ղեկավարը մի անգամ ասաց. «Յեթե բուրժուական բանակի ձեր հասակակիցները ճաշարաններ և կաֆեշանտաններ են դնում, դուք ստիպւած եք թափառելու տաժանակիր աշխատանքի վայրերում»: Այդպէս, ուրեմն, յեթե դուք կամենում եք ինձ բանտ նստեցնել, յես պատրաստ եմ ինձ զոհելու հանուն բանվոր յերիտասարդութեան պայքարի» (Ռաուն):

«Յեթե դուք ինձ դատապարտեք, յես պատրաստ եմ այդ հարկը հատուցանել: Յես կարծում եմ, վոր սրա վրեժը կլուծվի» (Եյլսթեյն):

Այս հպարտ խոսքերը, վոր դատարանում շարտեցին մեր ընկերները, նախ քան նրանց վրա բանտի դռները կփակվէին, վոչ թե պարտւածի, այլ վաղվա հաղթողի խոսքեր էին:

«Այսօր դուք մեզ բանտ եք նստեցնում, բայց վաղը...»

ԵԼԻ ՅԵՐԿՈՒ ՏԱՐԻ ԲԱՆՏ.

1923 թվի հոկտեմբերի 6-ին դատարանի առաջ կանգնեց Գ. Կ. Յեր. Մ. յենթաշրջանի ղեկավար կարլարուեցի 19 տարեկան ընկ. Նայթելը: Նա մեղադրվում էր թուրքիկներ տարածելու մեջ: Բացի դրանից,

իբր թե խուզարկության ժամանակ նրա մոտ դենք
եյին դտել: Այդ բավական եր դատախազի համար, վոր-
պեսզի նրա համար 4 տարի բանտ նշանակելու: Դատա-
րանը դատապարտեց նրան 2 տարով բանտի և 200 մարկ
տուգանքի:

Յուզմունքը կարգալու ժամանակ ընկ. Նայֆել-
դը գոչեց. «Բանվորները վրեժխնդիր կլինեն և ավելի
մեծ յեռանդով կաշխատեն հանուն կապիտալիստական
կարգի խորտակման»:

ՖԱՇԻՍՏՆԵՐՆ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ՄԵԿ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆ-
ԿԵՐՈՋ—ԴՐԱ ՀԱՄԱՐ 10 ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԿՈՄՄՈՒՆԻՍՏ
ԲԱՆՏ ԵՆ ԸՆԿՆՈՒՄ:

1923 թվին, յերբ ֆաշիստներն իրենց ռազմա-
կան վարժություններն եյին կատարում ու գրանով
բանվորներին պրովոկացիայի յենթարկում, Դոբբին-
հաուզենի հակասեմիտականները նույնպես գիշերային
մարզանքներ սարքեցին: Պատահամբ նրանց մոտով
անցան միքանի յերիտասարդ ընկերներ, վորոնց վրա
նրանք հարձակվեցին: Այն ժամանակ յերիտասարդ
ընկեր Վալլսեր Լուսերեն յետևից սպանվեց մի ֆա-
շիստի ձեռքով: Հուզված ընկերները միքանի ֆաշիստ-
ներից դենքերը խլեցին:

Այս դեպքի համար դատի յեթարկվեցին վոչ թե
ֆաշիստները, այլ մեր յերիտասարդ կոմունիստները:

Ֆաշիստները կանչված եյին իբրև վկաներ: Այս
դատավարությունը, ինչպես և մյուս բոլոր դատավա-
րությունները, «արգարդատություն» համար խայտա-
ռակություն եյին: Մարդասպանին անգամ ձեռք չտվին:

Մեր ընկերները բոլորը միասին 9 տարի 4 ամիս բան-
տարգելություն դատապարտվեցին՝ ընկ. Կիրսպեն—1¹/₂
տարի, Վիցգաուսենը—6 ամիս, Սեսսլերը—7 ամիս,
Կնարգակը—7 ամիս, Հաուզելսը—1 տարի, Կոխը—7
ամիս, Շրոյլենը—7 ամիս, Սայգերը — 1¹/₂ տարի,
Բաուսը — 1¹/₂ տարի և Կոխը—1 տարի:

ԹՌՈՒՑԻԿՆԵՐ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ—ԲԱՆՏ:

«Հանուն քաղաքացիական պատերազմի իմպերիա-
լիստական պատերազմի դեմ» մակագրություն թու-
ցիկներ տարածելու պատճառով շտուտգարացի 18 տա-
րեկան յերիտասարդ ընկեր Կարլ Ֆրիդլերը դատա-
պարտվեց 3 ամսվա բանտարգելության և 30 մարկ
տուգանքի:

Յերիտասարդական կազմակերպության քարտու-
ղար ընկ. Շուբոցը հունիսի 18-ին Մագդեբուրգում
մեղադրվում եր Կ. Յե. Մ. մեջ անլեզալ աշխատանք
կատարելու համար և դատապարտվեց 4 ամսվա բան-
տարգելության:

*
* *

Ընկ. Ռիխարդ Մոնգենը—Դ. Կ. Յե. Մ. Բրես-
լավի կազմակերպության քարտուղարը,—մեղադրվում
եր պետական դավաճանություն մեջ և Լայպցիգում դա-
տապարտվեց 1 տարի և 6 ամիս բանտարգելության և
100 մարկ տուգանքի:

*
* *

Յերկու յերիտասարդ քյոնիգսբերգցի ընկերներ—
Վիցնյովսկի և Նրիխ Բեմը Լայպցիգում դատապարտ-

վեցին պետական դավաճանության համար: Յերկու տարվա նախնական բանտարդելությունից հետո ընկ. ընկ. Վիշնյովսկին և Բեմը դատապարտվեցին յուրաքանչյուրը $1\frac{1}{2}$ տարվա բանտարդելության և հինգ տարով զրկվեցին քաղաքացիական իրավունքներից:

Մագդեբուրգում բանտարկվեցին 7 յերիտասարդ բանվոր: Պոմբրանիայում բանտարկվեցին 17 նախկին ընկերներ: Բոլորն ել պետական դավաճանության մեջ մեղադրվելու համար:

Զոլինգենում ընկերներից յերկուսը դատապարտվեցին յուրաքանչյուրը 21 ամսվա բանտարդելության: Մեղաբանքը—հակամիլիտարիստական պրոպագանդն եր. Բոնում, Բիլում, Տրիում, Կելլում և Կոբլենցում բանտարկված էին շատ ընկերներ, դարձյալ նույն պատճառով:

Հաննովերում սկսվեցին հալածանքները: Բանտարկվեցին ամբողջ ընտանիքներ, վորոնք իրենց մոտ թաղցնում էին կասկածելի մարդկանց:

«Ինտերնացիոնալ» յերգելու համար Յենայում 20 յերիտասարդ բանվոր ձերբակալվեցին:

Եմպենում ձերբակալվեցին կուսակցական բոլոր ղեկավարները, նույնպես և կոմյերիտական ղեկավարները:

Բրեմենում բանտարկվեցին 54 կուսակցական և 16 կոմյերիտական:

Վեգեդակում, ուր զինված ընդհարումներ էին տեղի ունենում, հրաման արձակվեց բոլոր կուսակցականներին և կոմյերիտականներին ձերբակալել:

Ֆագում և Ոյլդենբուրգում հրաման արձակվեց բանտարկել 50 ընկերներին, վորոնք մասնակցել էին ֆաշիստների զինաթափմանը:

Այս տարվա հուլիսի 20-ին Գյոնիգսբերգում դատարանը կոմյերիտականներին դատապարտեց բանտարդելության հետևյալ ժամկետներով.

Դայվեգայից—7 տարվա բանտարդելության և 100 մարկ տուգանքի:

Կայլսերից—6 տարվա բանտարդելության և 500 մարկ տուգանքի:

Բաումանից—4 տարվա բանտարդելության և 400 մարկ տուգանքի:

Սեյպուզից—5 տարվա բանտարդելության և 500 մարկ տուգանքի:

Վիլի Շացից—6 տարվա բանտարդելության և 500 մարկ տուգանքի:

Գրոսսմանից—նույնպես:

Նրա համար, վոր այս բոլոր ընկերները դավանում են հեղափոխական իդեաներ, ձգտում են ուժով տապալել գոյություն ունեցող կառավարությունը և այն բանվորական կառավարությունով փոխարինել, վորպիսին գոյություն ունի Խորհրդային Ռուսաստանում. նրանց մեղադրում եր Գերմանիայի հանրապետության դատարանը, հանրապետության, վորի նախագահը հանդիսանում ե սոցիալ-դեմոկրատ Ֆրանց Եբեռը:

Բերլինում Միջազգային յերիտասարդության ուր ձերբակալվեցին 15 ընկեր նրա համար, վոր մասնակցել էին ցույցին:

Գրեցում (Թյուրինգիա) կոմյերիտական ցույցը ցրելու ժամանակ վոստիկանությունը ձերբակալեց 3 մարդ:

Սիլեզիայի կոմյերիտական շահանգական կոմիտեյի քարտուղար ընկ. Ռիխարդ Մոնդեհեք վերջերս Լայպցիգում դատապարտվեց 1 տարի 6 ամսվա բանտարգելության: Ընկ. Ռ. Մ. Բ մինչեւ դատք մի քանի ցուցեց բացում:

Բրեսլավլի կոմունիստական յերիտասարդական կազմակերպության քարտուղար 21 տարեկան Ռիխարդ Մոնդեհեք մայիսի 22-ին դատարանը դատապարտեց $1\frac{1}{2}$ տարվա կալանքի բերդում և 500 մարկ տուգանքի—պետական դավաճանության նախապատրաստման մեղադրանքով:

*
* *

Բերլինում կարլ Լիբկնիստին և Ռոզա Լյուքսեմբուրգին արձաններ կանգնեցնելու ժամանակ Շարլոտենբուրգի կայարանի մոտ ընդհարում տեղի ունեցավ իրենց տոնակատարությունից վերադարձող ֆաշիստ-ազգայնականների և կոմյերիտների միջև: Այդ ժամանակ ձերբակալվեց կոմյերիտ Ոսոռ Վիլլգեյն, Վոստիկանատան պրեզիդենտի չինովնիկները Վիլլգեյին ամեն ոք յինթարկում եյին ամենասոսկալի տանջանքներ: Մարմնական այդ տանջանքների միջոցով նրանք կամենում եյին ստիպել պատանուն, վորպեսզի նա ասեր անուններն ու հասցեներն այն ընկերներին, վորոնք մասնակցել եյին ֆաշիստների հետ ունեցած ընդհարմանը: Վոստիկանության ծառայողները վշրեցին Վիլլգեյի բոլոր ատամները, պատռեցին բերանն ու դադանային ամեն տեսակի ձեռնախաղերով (մանիպուլյացիա) խոցոտեցին բերանի խոռոչը:

ՖՐԱՆՍԻԱ

Հակամիլիտարիստական պրոպագանդի համար դատապարտված են հետևյալ կոմյերիտականները՝

Մորիս Տրեան Բեզանսոնից	6 ամսով
Կրեսպին	3 »
Տիբո Ս. Եայենից	6 »
Լիբեհսուա	4 »
Մարսիցյոն Ռոմենից	4 »
Ռազի Պարիզից	18 »
Հաագ	15 »
ՈՔեմբալի	1 տարով
Աբբալոն	1 տարով:

Ընդհանուր առմամբ հակամիլիտարիստական պրոպագանդի համար դատապարտված քսան և չորս ֆրանսիական կոմյերիտականներ 10 տարի և 10 ամիս բանտարգելության յենթարկվեցին. (միջին հաշվով յուրաքանչյուրին ընկնում է մոտ կես տարի):

1923 թվի Փետրվարի 23-ը:

ՌՈՒՐԻ ՇՐՋԱՆ

1923 թվի հունվարի 11-ին, յերբ Ֆրանսիայի Կ. Յե. Մ.-ը Պուանկարեյի զորքերի հետ միասին իր միջանի անդամներին ուղարկեց Ռուրի շրջանը, վոր Գերմանիայի Կ. Յե. Մ. հետ միասին աշխատեն ոկկուպացիոն զորքերի կազմալուծման համար, այն ժամանակ յերկու կազմակերպություններն ել գիտեյին, վոր այդ սարսափելի ռեակցիա առաջ կբերի: Յեվ իրոք, դեռ չեր անցել 4 շաբաթ, վոր առաջին ընկերներն արդեն բանտ ընկան:

Գերմանական և ֆրանսիական վոստիկանությունը, գերմանական և ֆրանսիական լրտեսները կապիտալիստական Ինտերնացիոնալի իրենց տերերի որինակին հետևելով, կազմակերպեցին վոստիկանական ինտերնացիոնալ:

Ստորև մենք կտեսնենք, թե գերմանական վոստիկանությունն ինչպես եր ձերբակալում գերմանական կոմյերիտականներին ու հանձնում ֆրանսիական զինվորական դատարանին:

Բայց մենք կտեսնենք և այն, թե ֆրանսիական վոստիկաններն ինչպես եյին գերմանական ռեակցիայի արյունոտ դատարաններին գերմանական բանվորներ մատակարարում, վորպեսզի, ինչ կերպ ել գլղում ե ինի, թուլացնեն հեղափոխական պրոլետարիատին:

Ֆրանսիական միլիտարիզմն ուշքի չեկավ այն ժամանակ, յերբ անցավ առաջին զարմանքը, վոր արդյունք եր այն բանի, ինչպես գերմանական և ֆրանսիական կոմյերիտները հունվարի 11-ին գտնվում եյին իրենց հեղափոխական դիրքում: Գերմանիայի ոկկուպացիայի յենթարկված շրջաններում Դորամունդից մինչև Սաար-բլըյուկեն հունվարի 22-ի լույս 23-ի գիշերը կոմյերիտականներն ամեն տեղ փակցրեցին կապույտ, սպիտակ և կարմիր գույնով տպած պլակատներ, վոր բոլոր գինեբալների զայրույթն առաջացրեց: Ուղարկվեցին գիշերաշրջիկ պահակներ (պատրուլ) վորոնց պատվիրված եր Պլակատները պոկոտել նիզակներով ու լվանալ տաք ջրով: Պլակատները, վորոնց ցանցերը... Պլակատսովորաբար կարդում եյին նրանց բնագրերը... Պլակատներ փակցնելն իր առաջին գոհերը տվեց. Լանդայում և Պֆալցում յերեք ընկեր դատապարտվեցին 8 տարվա բանտարգելության, նրանց թվում կայգերլաուտերնցի ընկ. Մյուլլերը, վոր յերեք տարով դատապարտված եր բանտարգելության, 1924 թվի մայիսին ազատվեց, եր բանտարգելության, 1924 թվի մայիսին ազատվեց, երբև ուսյատագի համար ընտրված պատգամավոր:

Մարտի սկզբներում Ռուրի շրջանում մենք տվեցինք առաջին գոհերը, ընկերներ Մակուլյե, Մոսեք և Նիքսեմը, վոր դատապարտված եյին յուրաքանչյուրը 6 ամիս բանտարգելության, բռնվեցին հակամիլիտարիստական նյութեր պարունակող տրանսպորտի հետ: Նրանց մարմնական վայրագ տանջանքներից կազդուրվելու հնար տալու համար նախքան դատի հանձնելը, մի քանի որ Դյուսսելդորֆի բանտային հիվանդանոցում պահեցին:

ՅԵՐԻՏՍԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՐԸ ԵՍՍԵՆՈՒՄ

1923 թ.

Պրովոկացիայով ավագ շաբաթ որը ֆրանսիական զինվորների ձեռքով գնդակահարվեցին Կրուպպի գործարանի տաս բանվոր, Տրամադրությունը լարված երազայնականներն աշխատում էին գերման բանվորների և ֆրանսիական զինվորների միջև անդունդ փորելու նրանք դարաններից գնդակահարում և կոտորում էին ֆրանսիական և բելգիական զինվորներին, դրա հետևանք յեղան սանկցիաները, իսկ նրանք, իրենց հերթին, նորանոր սպանությունների հասցրին:

Մայիսի 1-ի որը պետք է մեզ ցույց տար, թե ինչն է ավելի ուժեղ գերմանական բանվորների ու ֆրանսիական զինվորների դասակարգային գիտակցությունը, թե յերկու կողմից բորբոքվող շովինիզմի ալիքը, Ռուրի շրջանի կուսակցական թերթերը մայիսի 1-ին ֆրանսերեն լեզվով տպագրեցին յեղբայրացման հրավիրող բոցավառ կոչ, լայն տարածելով այն ֆրանսիական զինվորների մեջ: Ամբողջ գրաված յերկրում տեղի յեր ունենում յեղբայրացում. դասակարգային գիտակցութունն ազգայնական թույնից ուժեղ գտնվեց:

Այդ մայիսի 1-ը բոլոր ընկերների համար խթան դարձավ՝ ֆրանսիական զինվորների մեջ աշխատանքն էլ ավելի ուժեղացնելու: 1923 թ. մայիսի 2-ին, Յերիտասարդություն որը, Եսսեն քաղաքի ընդարձակ սրահում կոմյերիտների հրապարակական ցույց պետք է տեղի ունենար: Կոմյերիտների գնդերը կոլոններով շարվեցին դեպի սրահը, իրենց հետ տանելով ֆրանսերեն լեզվով գրված պլակատը, իսկ հետի պլանի վրա

կարելի յեր տեսնել զինվորական միքանի կապտագույն վերարկուներ * ։ Զեկույցից հետո, վորը ներկաների կողմից լավեց վոգելորությունամբ ու կոչ արեց ֆրանսիական զինվորներին՝ թույլ չտան, վոր բուրժուազիան իրենց իբրև գենք ոգտագործի Ռուրի պրովետարիատի դեմ, սրահում մեծ արյունահեղություն տեղի ունեցավ. ներկաների կողմից ճանաչված յերկու ֆրանսական լրտեսներ կամեցան խուսափել արդար պատժից և ատրճանակները հանեցին: Նրանց գնդակներով մահացու կերպով վիրավորվեց ընկեր Դե Մարեթ:

Լրտեսներից մեկը միքանի որից հետո մեռավ վերից, իսկ մյուսը ընդմիշտ անհետացավ:

Ներկա յեղող ֆրանսիական զինվորները կովի մեջ չխառնվեցին, չնայած նրան, վոր լրտեսներից մեկն սպանվել էր, և ֆրանսիական գլխավոր շտաբը նրանց տեր չկանգնեց, վորովհետև պրովոկացիան չափազանց պարզ էր: Գ. Կ. Յե. Մ. սպանված անդամների ցուցակում Դե-Մարեթն առաջինն էր, բայց շուտով ցուցակը մեծացավ:

Յերեք որ հետո, Բյուրեյում մահափորձ կատարած ազգայնականներին հետապնդելու համար արձակած պատահական գնդակով սպանվեց ընկեր Խաբերը: Գնդակը լուսամուտից անցնելով մահացու կերպով վիրավորել էր ընկ. խաբերին, վոր գտնվում էր սենյակում: Դրանից միքանի որ հետո սպանվեց ֆերհալեցի ընկեր Գաբիոսը, վորը սահմանից «Հյումանիտե» յեր անցկացնում և փորձում էր փախուստով ադատվել ձերբակալությունից:

* Ֆրանսիական զինվորների տարապր:

Յերեք շաբաթում յերեք—սպանված այսպես էյին Գ. Կ. ՅԵ. Մ. կրած զոհերն այդ կարճ ժամանակում։ Բայց այդ յերեք սպանվածները մեր յերիտասարդության համար որինակ դարձան այն բանին, թե ինչպես պետք է ամբողջ ուժերով, առանց ուշադրություն դարձնելու վորևե վտանգի, նվիրվել ֆրնասիական, բելգիական ու նույնիսկ Մարոկկոյի զորքերի մեջ տարվելիք հեղափոխական աշխատանքին։ Մենք չենք պատրաստվում այդ աշխատանքին այստեղ շատ տեղ հատկացնելու, այլ ցանկանում ենք թվել այդ ժամանակամիջոցի զոհերի թիվը, վորոնք հարյուրներով լցրել են բանտերն այն ժամանակ, յերբ սոցիալիստական բանվոր յերիտասարդությունը մասնակցել է բոլոր ազգայնական ցույցերին, յերգել է «Գերմանիան գերազանց է բոլորից» և իր յերգերի շարքից միանգամայն ջնջել է «Ինտերնացիոնալը»։

Հուլիս-ոգոստոսին, այսինքն գերմանական պրոլետարիատի մեջ յեղած սովի սկզբում, վորի հետևանքը յեղավ հոկտեմբերյան յելույթը Ֆ. Կ. ՅԵ. Մ. և Գ. Կ. ՅԵ. Մ. ակտիվությունն էլ ավելի զարգացավ։ Հրատարակվեցին թուղթիկներ, թերթեր, բրոշյուրներ, վորոնք մեծ մասամբ անլեզալ կերպով տարածվում էյին զինվորական բլիջներում, նույնպես և մեր ընկերների միջոցով—բանտերում։

Հուլիսի 20-ին մեր ընկերներից յերեքը բանտարկվեցին Տրիրում և մեկը Բոխումում, իսկ հաջորդ շաբթին—ելի հինգ ընկերներ։ Ֆրանսիական զի. վորական դատարանի առաջին դատավճիռը նրանց 26 ամսվա բանտարգելության դատապարտեց։

Յերկու կոմյերիտականուհիներ դատապարտվեցին յուրաքանչյուրը 3 ամսվա բանտարկության։

Ոգոստոսին խերնում բանտարկվեցին 8 ընկեր, վորոնց յենթարկեցին ամենաասուկալի ծեծի, վորպեսզի ստիպեն նրանց մատնել առաջնորդներին։

Գ. Կ. ՅԵ. Մ. ՀԵՐՈՍ ԴՈՍԿՈՎՍԿԻՆ

Այս վերջին ընկերների թվումն էր գերմանական հանքային բանվոր լեհական ծագում ունեցող Դոսկովսկին։ Նա վճռել էր վերջ դնել թե իր և թե մյուս ընկերների տանջանքներին։ Վորպեսզի ազատած լինի իրեն և իր ընկերներին հետագա տանջանքներից, նա իրեն առաջնորդ անվանեց։ Սակայն դրանով հարցաքննությունների ժամանակ նա միայն կրկնապատկեց իր տանանքները, վորոնց միջոցով կամենում էյին նրան ստիպել հայտնելու բանակի հետ ունեցած կապը։ Յերկար գործադրկությունից մաշված, թուլացած սովից, վոր նա կրում էր իրեն ձերբակալելու բոպեյից, Դոսկովսկին իր հեղափոխական պարտքը կատարելու համար դեռ բավականին տոկուն էր ու լուություն պահպանելու համար դեռ բավական աներեր։ Յեվ յերբ հեղափոխական Դոսկովսկին զգաց, վոր այսպիսի տանջանքները տանելու համար նրա ուժերը բավական չեն, նա վճռեց ինքնասպանություն գործել։ Ցավոք սրտի, նրա անձնվիրությունը չտվեց այն հետևանքներն, ինչ վոր նա յեր սպասում, վորովհետև յոթ ընկեր իրենց աշխատանքի պատասխանատվությունն ամբողջովին վերցրել էյին իրենց վրա, ու նրանցից յուրաքանչյուրը 8 ամսվա բանտարգելության դատապարտվեց։ Բայց ընկ. Դոսկովսկին ցույց

տվեց Ռուսի շրջանի Կոմյերիտմիութեանը, թե չնայած ամենասոսկալի տանջանքներին, ինչպես կոմմունիստը կարողանում է լռել և դավաճանութեամբ ազատություն գնելու փոխարեն գերադասում է իրեն հեղափոխական մեռնել:

Սեպտեմբերին բռնությունների կամպանիան ավելի սաստկացավ, յերիտասարդական թերթնու «Յուն-դե-Հարդեն»-ը արգելվեցին, նույնպես արգելվեցին կամ ցրվեցին յերիտասարդների բաղմաթիվ ժողովները, յերիտասարդութեան դեմ գնդացիները դուրս բերվեցին ինչպես, որինակ, Հելզենքիրխենում, յերկաթալար արգելքներ և հետևակ, ինչպես, որինակ, Բոխումում և Լանգենդեկում 1923 թվի յերիտասարդութեան ուրը:

Բանակում մեր գործունեյությունն ավելի և ավելի լայն շրջաններ եր ընդգրկում, գերման բանվորների յեղբայրացումը Ֆրանս-բելգիական զինվորների հետ ավելի հաճախ եր տեղի ունենում, այն ժամանակ, հոկտեմբերին Գերմանիայի գլխով անցնող հեղափոխական ակիքն ավելի ու ավելի յեր բռնում բանակը: Զորքերը տատանվում էին, հեղափոխությունն ամբողջում եր: Կապիտալիստները վորոշեցին վերջ տալ դրան, վախենալով, վոր պրոլետարիատի հաշիին նորից միացած ֆրանս-գերմանական կապիտալիզմի հիմքերը կարող են տատանվել: Ֆրանսիայի զինվորական մի-նիստը և Ֆրանսիայի ֆաշիստների թագավոր Մաժի-նոն անձամբ յեկավ Ռուսի շրջանը և համոզվեց, վոր կոմմունիստական պրոպագանդը թափանցել և բա-նակը:

Այդ փաստի ամենից լավ իլլյուստրացիան զին-

վորական միլիտարի պաշտոնական հաշվետությունից վերցրած հետևյալ քաղվածքն է.

«M. C. 3/XI—23. №1601/22, 1923 թ. նոյեմբերի 1-ին կայադորի զինվորները մասնակցել են զինվորա-կան և քաղաքացիական անձնավորություններից բաղ-կացած պաշտոնական չինոյնիկների ցույցին:

«Հիշեցնում եմ, վոր նման հրապարակական ցույ-ցերի մասին յուրաքանչյուր անգամ անմիջապես պետք է հայտնվի ինձ, ըստվորում պետք է ցույց տալ հան-ցավորներին յերեան հանելու համար ձեռք առած մի-ջոցները, ինչպես և ըստ կարելույն ձեռնարկած սանկ-ցիաները»:

Հարկավոր եր դրան միանգամ ընդմիշտ վերջ տալ, և Պարիզից գրաված շրջաններն ուղարկվեցին ընտրովի շատ պահնորդականներ: Միքանի լրտես-ների ոգնութեամբ նրանց հաջողվեց իմանալ մի շարք հասցեներ ու 1923 թվի դեկտեմբերի 18-ին նրանց ուռկանը մեծ վորս ընկավ՝ ձերբակալեցին 150 ընկեր:

Մինչ այդ, դեռ նոյեմբեր ամսին, բանվոր յերի-տասարդությունից մոտ 60 հոգի ձերբակալվեցին: Այդ 200 ձերբակալվածների մեջ կային 100 կոմյերիտա-կաններ, վորոնցից շատերն ազատվեցին, իսկ բան-տարկված մնացին 57 ընկեր:

Այդ կալանավորներին միացվեցին գրաված շը-ջաններում աշխատող 11 ֆրանսիական զինվոր, 1 ա-րաբ, 1 սերբ 1 ավստրիացի և 1 իտալացի՝ կոմյերի-տական ևս: Հետագայում նույն բանտը դրվեց Ֆրան-սիայի Կ. Յե. Մ. ներկայացուցիչ Լոգերեն:

Այդ բոլոր ընկերները խառնվեցին հեղափոխու-թյան պատմութեան մեջ հայտնի Մայնցի հակամի-

լիտարիստական դատավարութեան և ընդհանուր գումարով 133 տարվա բանտարգելութեան դատապարտվեցին: Բայց մինչև դատավճիռն այդ բոլոր ընկերները — պատանիներն ու ջահել աղջիկները — յենթարկվեցին այնպիսի խոշտանգումների, վոր մենք անկարող ենք չհիշել միքանի ամենաբնորոշ դեպքեր:

Այդ խոշտանգումներն առանձին անհատների դործ չեյին, վորովհետև մենք բերում ենք զանազան վայրերում տեղի ունեցած դեպքեր, վորոնք բնորոշում են վոչ միայն ֆրանսիական վոստիկանութեան սովորական գործունեյութեան պատկերը, վորովհետև ֆրանսիական վոստիկանութեան հետ ձեռք-ձեռքի աշխատող գերմանական վոստիկանութեանը գերման յերիտասարդ բանվորների ու բանվորուհիների նկատմամբ պակաս դատան չեր: Վհչ, այդ խոշտանգումները հանդիսանում եյին ռեակցիայի արտահայտութեան, վոր զգում եր, թե պրոլետարիատի և բուրժուազիայի կուլի միջև մոտենում ե վճռական ընդուն և հույս եր դնում ամենապոսկալի գազանութեանների միջոցով մի անգամ ել հաղթանակ տանել: Սակայն այդ հույսն ապարդշուն անցավ, վորովհետև ֆրանսիական ռեակցիան ֆրանսիական պրոլետարիատի ճնշման տակ ստիպված եղավ ադատել գերմանական բանվորներին: Միջադգային կապը, վոր հիմնվեց Ռուրի շրջանում մեկ կողմից գերմանական բանվորների և մյուս կողմից ֆրանսիական ղինվորների միջև, կատարյալ ուժի մեջ մնաց նույնիսկ գերմանական պրոլետարիատի հոկտեմբերյան պարտութեանից հետո և նշանավոր դարձրեց բանվոր դասակարգի հաղթանակը:

Կ ՈՄՅԵՐԻՏՆԵՐԻ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

Հեռագ Լաուր—Կ. Յե. Մ. Պֆայլցի շրջանային կազմակերպութեան քարտուղարը յերեք ու շարունակ յենթարկվեց անլուր ծաղրանքների: Նրանից հետո, յերբ վեց վոստիկան անգուլ կերպով ձեծում ու վոտքերով տրորում եյին նրան, վոստիկանական մի չինովիկ փոքրիկ ունեւիքը (пинцет) խրեց նրա քիթն ու ծակեց ընկ. Լաուրի քթածակերը, նրան անտանելի տանջանքների յենթարկելով: Այդ տանջանքների հետեանքը յեղավ ընկ. Լաուրի ծանր հիվանդութեանը, և դեռ շատ շարաթներ անց յերեւում եյին խոշտանգումների հետքերը: Սակայն, չնայած, վոր ընկ. Լաուրի քթից ու ականջներից արյուն եր հոսում, վոստիկանները չկարողացան նրանից մի խոսք անգամ պոկել:

Հովսեփ Դիսկա.—Այստրիական այս ընկերոջ վրա կասկածում եյին, վոր դեկավարում ե բանակի պրոպագանդն, ու դրա համար ել ֆրանսիական ժանդարմները նրան ընտրեցին նշանակեա (мишень) հատուկ գազանային բռնութեանների համար: Նրան ձերբակալեցին գիշերը, մադերից բռնած, անկողնից դուրս քաշելով, վոտքերով այնքան կոխկրտեցին, մինչև վոր կոկորդից ուժեղ կերպով արյուն հոսեց: Յերկու վոստիկան յերկու ու շարունակ ռետինե մտրակներով սոսկալի կերպով խփում եյին նրա գլխին ու կոշիկներով տրորում նրա փորը. այնպիսի վոր ընկ. Դիսկան մինչև որս ել չի կազմորդ. այնպիսի վոր ընկ. Դիսկան մինչև որս ել չի կազմորդ: Մարտիկն այդ գազանութեանների հետեանքը վոչնչով չտարբերվեց նույնիսկ այստեղ ել հետեանքը վոչնչով չտարբերվեց նույնիսկ. Դիսկան չտվեց վոչ մի ցուցմունք:

Յեթե մենք ուզենայինք առաջ բերել մարտիրոս-
ների ցուցակը, ապա մենք պետք է մեկիկ-մեկիկ թվե-
յինք բոլոր ընկերներին, մենք պետք է նկարագրեյինք
այն ծաղրանքները, վորոնց յենթարկվեց ընկ. Կլար-
բերգը Հելզենկերխենի բանտում, մենք պետք է նկա-
րագրեյինք այն բռնությունները, վորոնք կատարված
են մեր ընկեր Կարլ Շուլցի վրա Վամբերում, Յակոբի
վրա՝ Ռեկլինգհաուզենում, իտալական կոմյերիտական
Բենկովիչի վրա, վորոնց գիտակցությունը կորցնելու
ուստիճան ծեծում էյին: Մենք պետք է նկարագրեյինք
մնացած բոլոր գեպքերը, բայց մենք այստեղ կանգ
կառնենք միայն ֆրանսիական կոմյերիտական Լոդերեյի
նկատմամբ կատարած բռնությունների վրա:

Կրաված շրջանների ֆրանսիայի Կ. Յե. Մ. պատ-
վիրակ Ռոբերտ Լոգերեն իր ձերբակալությունից հե-
տո յենթարկվեց այնպիսի սոսկալի խոշտանգումների,
վորոնց առաջ դժգոհում են բոլոր վերոգրյալ գեպ-
քերը: Այն բանից հետո, յերբ դահիճները վոչ մի մի-
ջոցով չկարողանան նրանից վոչ մի խոսք կորզել, նրան
եկեկոթական արողից նստացրին, վորպեսզի աննկա-
րագրելի տանջանքներ առաջացնող ելեկտրական հո-
սանքի ազդեցության տակ նրանից կեղծ ցուցմունք-
ներ ստանան: Բայց Լոդերեն լռում էր, և հեղափոխա-
կան տոկունության համար դատարանը նրան վարձա-
տրեց 10 տարվա բանտարգելությամբ:

Այսպիսին է գործելակերպը, այսպիսի յեն միջոց-
ները, վորոնցով ֆրանս-գերմանական ռեակցիան հույս
ունեն Գ. Կ. Յե. և Ֆ. Կ. Յե. Մ. գործունեյությունը լիկ-
վիդացիայի յենթարկել, վորոնցով նա մտադրի էր խեղ-
դել հեղափոխական կամքը: Ռեակցիային զոհ գնացին

վոչ միայն Գերմանիայի յերիտասարդության կոմուն-
նիստական կազմակերպությունների անդամներն, այլև
Ֆ. Կ. Յե. Մ. անդամները, վորոնք զրավող բանակի
շարքերում առաջինն էյին շվիման մեջ մտնում գեր-
մանական պրոլետարիատի հետ, վորոնք այնքան էյին
տարված իրենց պարտքով, վոր առաջին իսկ ուրից
գերման բանվոր դասակարգի կողմը բռնեցին: Շատ
էյին զինվորները, վորոնք խախտում էյին սպաների հը-
րամանները, յերբ կամենում էյին նրանց ուղարկել
գերմանական բանվորների դեմ: Մենք չգիտենք այն
բոլոր զինվորների անունները, վորոնք իրենց հեղափո-
խական պարտքը կատարելու համար բանտ են ընկել:
Սակայն խոսելով զրաված շրջանների ֆրանս-գերմա-
նական ռեակցիայի զոհերի մասին, մենք չենք մոռանա
և ֆրանսիական բանակի այդ գնդերի մասին: Ամենից
առաջ կհիշենք V-րդ ալալյան յեգերական բատալիոնի
մասին, վորին դեպի բանվոր բնակչությունն ունեցած
իր բարեկամական վերաբերմունքի համար ստիպված
էյին չորս ամսվա ընթացքում չորս անգամ մեկ տե-
ղից մյուսը տեղափոխել: Կրկնում զինվորները քաղա-
քով պետք է անցնեյին յերկու ջոկատ ժանդարմների
պահակախմբի հսկողության տակ:

Եսսենի մոտի փոքրիկ դյուղում բանակած 64-րդ
դուռը դժգոհությամբ այնքան էր բռնված, վոր հարկ
յիլավ նրան պահակախմբով փոխադրել Դյուսսելդորֆ:
Հելզենկերխենում կանգնած ավիո-ջոկատի 10 զինվոր
բանտ նետվեցին խռովության մեջ մասնակցելու հա-
մար. Գ. Կ. Յե. Մ. և Ֆ. Կ. Յե. Մ. պրոպագանդի
ազդեցության տակ գտնվող այդ բոլոր հեղափոխական
անհայտ զինվորները պետք է դասվեն կոմունիստա-

կան յերիտասարդական շարժման ունեցած գոհերի թիվը:

Բանտ գնացող մեր ընկեր զինվորներն ել դատարանի առաջ յերևան հանեցին նույն տոկոսութիւնը, ինչ վոր դադգյահի բանվորները:

Ռայմոնդ Արգուենը, 9-րդ թնդանութեան գնդի յենթասպան, վորը դատաւարութեամբ եր 2 տարվա բանտարգելութեան, զինվորի պատվի մասին նրան հիշեցնող զինվորական քննչին պատասխանեց. «Նախ քան յենթասպա դառնալս յես բանվոր եյի»:

Սյլբերս Լեմիրը, 9-րդ թնդանութեան գնդի զինվոր եւ Ֆ. Կ. Յե. Մ. Կ. Կ. անդամ, պատասխանեց. «Ռոյալիստների (արքայականների) ռեակցիոն պրոպագանդին յես հակադրում եմ պրոլետարիատի հեղափոխական պրոպագանդը»: Նա դատաւարութեան յերկու տարվա բանտարգելութեան:

Լիեզասը, **Բասիսը**, **Դյուբեկը** եւ ֆրանսիական ուրիշ վեց զինվորներ բանտ նետվեցին յուրաքանչյուրը հինգ տարի ժամանակով:

Պրոլետարիատի միջադպիքին ճակատը կովի մեջ ստեղծվեց, բանտերի մեջ նա ռեակցիայի շնորհիվ ել ավելի ամուր դողվեց:

ՄԱՅՆՅԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԸ.

Դաժան բռնութիւնների այդ շրջանում մեր շարքերից խլվեցին մեր յերկու ամենահուսալի ընկերները: Ծանր հիվանդ կոմյերիտական ընկեր **Զեյլբախը** բանտում միջանի շաբաթ մնալուց հետո արձակվեց, վորովհետեւ նրա դեմ վոչ մի փաստանշան չկար:

Մայնցի դատաւարութիւնից քիչ առաջ նա նո-

րից ձերբակալվեց: Տեղափոխված լինելով խոնավ կամերայում, ստանալով անբավարար սնունդ, զրկված լինելով բոլոր տեսակի բժշկական խնամքից, նա դատաւարութեան ժամանակ բանտում մեռավ:

Ընկեր **Քեզեքը**, վոր եստենցի յեր ե վորը նույնպես բանտարկված եր հակամիլիտարիստական պրոպագանդի համար, բանտից ազատվեց աննկարագրելի ծաղրանքների յենթարկվելուց հետո:

Սակայն բանտում ապրած տանջանքները անհետ չկորան, նա հիվանդացավ հետամտութեան մանիայով, փախավ Ռուրի շրջանից, անդադար շրջագայում եր Գերմանիայում եւ շարունակ հետապնդող ֆրանսիական վոստիկանների մասին դառանցելով, 1924 թվի հուլիսին Բրեմենում վերջ տվեց իր կյանքին:

ՅՐԱՆՍԻՅԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՐԱԾ ԶՈՀԵՐԸ.

Ֆրանսիական ռեակցիան իր կատաղի դայրոյթը դարձրեց Ֆ. Կ. Յե. Մ. վրա, վոր այնքան սերտ կերպով աշխատակցում եր Գ. Կ. Յե. Մ.:

1923 թ. հունիսի 1-ին ընդհանուր գումարով 130 ամսվա բանտարգելութեան յենթարկվեցին 24 ընկերներ, վորոնց, սակայն, շուտով միացավ կոմյերիտական շերի ելի մի ամբողջ շարք: Հիշենք միայն միջանիսին՝ **Քեզանսնի Կ. Յե. Մ.** քարտուղար **Տիկոն 6** ամսով դատաւարութեան, Մյուլհաուզենի Կ. Յե. Մ. կազմակերպութեան անդամ **Ալբախը**—մեկ տարվա տաժանակիր աշխատանքների, Սարասբուրգից՝ **Հասսը**—18 ամսվա, **Դյուբեկը**—3 ամսվա, **Քալենը**—2 ամսվա բանտարգելութեան: Բացի նրանցից բանտն են

հետված ելի 19 ուրիշ ընկեր: Վորպիսզի վերջնակա-
նապես խեղդեն ամեն տեսակ պրոպագանդ, վերջի-
վերջո ձերբակալվեց Ֆ. Կ. Յե. Մ. Գլխավոր քարտու-
ղար Ժակ Դորիոն, վորը դատապարտվեց յերկարա-
բանտարգելության, բայց բանտում 6 ամիս ֆնալուց
հետո ազատվեց ֆրանսիական պարլամենտի ձեռքով,
վորը նրան պարլամենտի պատգամավոր եր ընտրելի:

* *

Այդ բոլոր ռեակցիոն միջոցներն ել ավելի ուժե-
ղացրին Գ. Կ. Յե. Մ. և Ֆ. Կ. Յե. Մ. մարտական
պատրաստությունը, և այժմ գերմանական և ֆրանսիա-
կան յերիտասարդ կոմմունիստներն ավելի սերտ, քան
յերբևե, կապված են միմյանց հետ, կապված են ի-
րենց այն վճռով, թե կապիտալիզմի ձեռքից նրա ա-
մենահզոր զենքը—բանակը, պետք ե կորզել, վորպես-
զի նրա ոգնությամբ Հոհենստում ֆրանս-գերմանա-
կան և միջազգային բուրժուազիայի գերեզմանը վորեն:

Հարի

ՀՈՒՆԳԱՐԻԱ.

Հունգարիայի պրոլետարիատի պատմության մե-
1919 թվի ոգոստոսի 1ը վողքերգական թիվ ե:

Այդ որը նշանավոր ե նրանով, վոր պրոլետա-
րիատի դեկտատուրայի վախճանի որն ե Հունգարիա-
յում և միաժամանակ բանվոր դատակարգի յերկար ու
ծանր տառապանքների սկիզբը: Սոցիալ-դեմոկրատիա-
յի դավաճանությունը աշխատավորության իշխանու-
թյան բախտը վճռեց: Ռումինական իշխանների բա-
նակը Հանդիպելով վոչ մի արգելքի, գրավում ե Բու-
դապեշտը ու զինաթափ անում բանվորների գործա-
բանային բառալիոնները: Սկսվում ե պրոլետարների,
կարմիր-բանակայինների և բայլշեիկների անդուծ թըշ-
նամանքը: Հունգարական կոմմունիստական Յերիտա-
սարդական Միության առաջնորդներից մեկին, Լեո
Լեելից գնդակահարում են առանց դատի: Սեփա-
կանության սրբազան իրավունքի ամեն մի խախտ-
մանը տիրող դասակարգն արյունալի գազանություն-
ներով ե հատուցում:

Այդ որերում, անդուծ հալածանքի առաջին որե-
րում ստեղծվում ե անվախ ու անվհեր բանակը—
կոմյերիտների առաջին ընդհատակյա բանակը: Շար-
ժումը ծնունդ ե առնում Բուդապեշտի կեղտոտ ճաշա-
րաններից մեկում և փորձում ե նորից Հունգարիայի
ճնշված բանվորների մեջ զարթեցնել առաջվա հավատը,
առաջվա ուժը: Պրիմիտիվ միջոցներով տպագրված
թուղթիկները նորից սկսում են արտացոլել ճնշված

պրոլետարիատի ձգտումները: Վոգեկորված յերիտա-
սարգ բանվորներն իրենց ձեռքն են առնում կադմա-
կերպչական աշխատանքը: Նորից կենդանանում են բան-
վոր յերիտասարդության բանակները և իշխանությունը
նվաճած բուրժուազիայի ցնծության մեջ ստեղծվում
են կոմյերիտականների առաջին ընդհատակյա բջիջ-
ները:

Ժանդարմերիայի ու սոցիալ-դեմոկրատական բյու-
րոկրատիայի անընդհատ հալածանքների տակ յերկու
ամբողջ տարի հեղափոխական աշխատանք և կատար-
վում, մինչև վոր վոստիկանությունը մի անգամ կարո-
ղանում և մեր ընկերների հետքը զտնել: Արյունոտ
տանջանքների միջոցով յերիտասարդությունից ցուց-
մունքներ են դուրս քաշում, և նոր ու նոր մասսայա-
կան բանտարկություններից հետո կադմակերպությու-
նը քայքայվում և:

Բայց այսպես յերկար տեւել չի կարող: Բանվոր
յերիտասարդության մասսաները յերկար ժամանակ չեն
կարող առանց առաջնորդների մնալ: Միքանի անվեհեր
յերիտասարդ բանվորներ (Զինգեր, Կոմոր, Դրեյներ
և այլք) շարժման կադմակերպությունը նորից իրենց
ձեռքն են առնում: Նրանք յերևան են բերում անդուլ
յիռանդ և անորինակ վճռականություն: Անշահախնդիր
կերպով նվիրվելով բանվոր դասակարգին ծառայե-
լուն, ընկերները ուղի յեն փնտռում դեպի Ֆաբրիկա-
ներում և արհեստանոցներում գտնվող յերիտասարդ
բանվորներն ու նոր կապեր կապում:

Հազարավոր խորամանկություններ եյին հարկա-
վոր, վորպեսզի գերադանցեն վոստիկանության մտքած
լրտեսության խորամանկ սխտեմին, վորպեսզի նորից

շարժում ստեղծեն, վորպեսզի նորից կադմակերպեն բան-
վոր դասակարգի գիտակից, զոնվելու պատրաստ շերտը,
վոր կոչված և ղեկավարելու պրոլետարիատի կռիվը:

Սոցիալ-դեմոկրատական բյուրոկրատիան զար-
մանքով տեսնում էր, ինչպես կոմունիստները հող են
նվաճում: Սոցիալ-դեմոկրատներն ամեն տեսակ մի-
ջոցներով փորձում են մասսաների մեջ հեղափոխա-
կան հոսանքը խանդարել, բայց իզուր: Շարունակ ա-
վելի ու ավելի մեծ թվով բանվորներ կոմունիստա-
կան կադմակերպությունների ազդեցության տակ են
ընկնում: Այն ժամանակ սոցիալ-դեմոկրատական կու-
սակցությունն իր պաշտոնական որդանի սյունյակնե-
րում, վորպես միակ փրկություն, դիմեց բամբասան-
քային մասնություններին: Նա գրում էր. «Բանվորներ,
մի ընկներ Մոսկվայի վարձկանների ուռկանը: Ձեր
փորձված առաջնորդներին վստահեցեք»:

Խորտի վոստիկանությունը հասկացավ ակնարկը
և սոցիալ-դեմոկրատիայի ցույց տված ուղղությամբ
կրկնապատկված ուժերով գործի անցավ: Նոր արթ-
նացած կոմունիստական շարժման ղեկավար 23 տա-
րեկան ընկ. Զինգերը շատ լավ գիտեր, վոր վոստիկա-
նությունն ուշի-ուշով հետևում և կադմակերպության
աշխատանքներին, սակայն մնաց իր գիրքում, վերով-
հետև զգում էր, վոր շարժման համար այդ անհրա-
ժեշտ և: Միայն 1923 թվի նոյեմբերին, կամ Յերիտա-
սարդության կոմունիստական Խնտերնացիոնալի յեր-
րորդ կոնգրեսից քիչ առաջ, նա նավ նստեց, վոր-
պեսզի, իբրև հունգարական կադմակերպությունների
ներկայացուցիչ, Ռուսաստան դա ու միաժամանակ
թաղնվի վոստիկանության լրտեսներից:

Բայց արդեն ուշ էր:

Նա և նրա հետ 30 ուրիշ ընկեր ևս բռնվեցին: Չնայած բոլոր տեսակի տանջանքներին, նրանք անսասան ամբուլթյամբ չհրաժարվեցին կոմմունիզմից: Պակում եյին նրանց մաղերը, ծեծում եյին նրանց ուտիկները, կոխկրտում եյին վոստիկանական ծանր կոշիկներով, սակայն նրանք վոչ վոքի չմատնեցին: Յերիտասարդ պատանիներին ու ջահել աղջիկներին մեղկացնում եյին ու գաղանաբար ծեծում, սակայն նրանցից վոչ վոքի չկարողացան ստիպել հրաժարվել իրենց գաղափարից: Յեւ յերբ հունգարական բանվոր դասակարգն իմացավ դատարանի վճիռը, վորով դատապարտված եյին Երես Զինգերը 14, Հովսեփ Գրեյները 14, Ֆրանց Գրեյները 10, Կասցբուրգը և Սաբոն 12 ու մյուս 42 ընկերները 1—10 տարով յուրաքանչյուրը, այն ժամանակ նրա ամբողջ համակրանքը դարձավ դեպի բանվոր, յերիտասարդ բանվորութեան կողմը, վորն այնքան հաճախ ապացուցել էր, թե հաղթանակում և Կոմմունիստական կուսակցութեան ամենաանվահեղ բանակը:

ԱՌԱՆՅ ՎՈՐՅԵՎԵ ԲԱՑԱՏՐՈՒԹՅԱՆ.

Բուդապեշտի աւելայական դատարան շտապ դատարանի լիազորութիւններով.

B/VII. 9170/1921.

Հունգարական պետութեան անուցով.

Ձինվորական դատարանի լիազորութիւններով ուժոված Բուդապեշտի պատժիչ դատարանը 1921 թվի հունիսի 30-ից մինչև հուլիսի 2-ը Բուդապեշտում ա-

րադացրած դատավարութեան կարգով, մասամբ դռնփակ, քննելով խռովութեան մեջ մեղադրվողներին՝ Յելիզավետա Անդրէի և 8 ուրիշ անձանց դործը, հանում և հետևյալ դատավճիռը՝

1. Անգիլ Յելիզավետային, համալսարանի ուսանողներէից, 19 տարեկան.

2. Բերեյի Անգորին, համալսարանի ուսանող, 21 տարեկան.

3. Վայքերգեր Զոլսանին, միջնակարգ դպրոցի աշակերտ, 18 տարեկան—15 տարով բանտարկելութեան յուրաքանչյուրին, ապա նաև հիշյալ անձանց դատապարտում և 10 տարվա իրավազրկման:

4. Պոլոնիա Ֆրանցին, 21 տարեկան, մետաղագործ.

5. Սանո Լյուզովիցին, 20 տարեկան, մետաղագործ.

6. Ֆերենցա Ֆոգեֆին, 21 տարեկան, տպագրիչ—դատարանը դատապարտում և 12 տարվա բանտարկելութեան յուրաքանչյուրին և իրավազրկման 10 տարի ժամանակով:

7. Ֆելեզարի Միկլոսային, 18 տարեկան, ներկարար.

8. Խորվաս Իմրեյին, 18 տարեկան, մեքենագործ.

9. Թաթար Ֆրանցին, 20 տարեկան, շոֆիւր—10 տարով բանտարկելութեան և քաղաքական իրավազրկման 10 տարով յուրաքանչյուրին:

Պատասխանատուութիւն.

Արքայական դատարանը պատիժը վորոշելիս դե-

կապարվեց հետեյալով. — դատարանը կատարելապէս ապացուցված համարեց, վոր կոմմունիստական կազմակերպութիւնները մեջ գտնվող մեղադրյալները խռովութիւն չգրգռելով միջոցների մեջ, ձգտում էին Հունգարիայում հաստատել կոմմունիստական կարգ, վորը հնարավոր է միայն հեղափոխական ճանապարհով, այդպիսի հեղափոխութիւն, դատելով մեղադրյալների ձեռքով տարածված թուլցիկների բովանդակութիւնից, իրագործելի չէ միայն արյունահեղութիւն ճանապարհով, մահապատիժներով, կախաղաններով և իրենց դատակարգի անդամ չհղող քաղաքացիների վրա ամեն տեսակի բռնութիւններով, վորի համար ել մեղադրյալների գործողութիւնները կրում են պատժական որոշումներ 157 հոգի վաճի խախտման բոլոր նշանները:

Արքայական դատարանը, հաշվի առնելով այն մահվան դատավճիռները, վոր հանված են այլ գործերի առթիւ, հրաժարվեց այդպիսի (մահվան) դատավճիռների հանելուց, անգամ 20 տարուց բարձր հասակ ունեցողների նկատմամբ և բոլոր մեղադրյալներին դատապարտեց միայն աղատադրվման, իրենց հանցավոր գործողութիւնը համապատասխան ժամկետներով:

Դատարանը կարգադրութիւն է անում բռնագրավել մեղադրյալների կազմակերպած գաղտնի տպարանը, վոր հանդիսանում է իրային ապացույց և առավել ևս արժանի յի բռնագրավման, վորովհետեւ վերը բերած բոլոր անձերը մեղադրվում են ուրիշ հանցավոր արարքների մեջ ևս:

Դատարանի նախագահ՝ Գ. Բոլշակով Կուրպանդի
Բուդապէստ, 2 հուլիսի 1921 թ.

ՄԱՐՏՈՆ ՎԱԴԱՆ

Հունգարական պրոլետարական հեղափոխութիւնը դարձնել է այս իսկական բայշնիկներին: Հեղափոխութիւնը ճնշելուց հետո, յերբ արդեն արտասահմանում կազմակերպված Կենտրոնական Կոմիտէին հարկավոր յեղավ վստահելի, ամեն բանի պատրաստ և բանվորների հարգանքը վայելող լիազոր. Հունգարիայում, Կենտրոնական Կոմիտէն ընտրեց 20 տարեկան ՄԱՐՏՈՆ ՎԱԳԱՆԻՆ, վորը միանգամայն արժանացել էր այդ վստահութիւնը: Նա վստահելի և վճռական հեղափոխականի որինակ էր:

Յերբ Վագանին իմացավ, վոր Կ. Կ. իրեն է ընտրել նա կանչին ուրախութիւնով արձագանգեց: Չէ վոր նա ձգտում էր հենց միայն այդ բանին, վոր նորից կենդանի աշխատանքի անցնի, հեռանա գաղթականութիւնից, թեկ նա շատ գիտեր սպիտակ տերրորի բոլոր սարսափների մասին, գիտեր ինչ էր սպասում իրեն, յիթե բռնվի:

Վաչ մի կուսակցութիւն մատնիչներից ապահովված չէ: Կարող է պատահել, վոր անուր տանջանքներին շատերը չեն կարողանում գիմանալ... Այդպիսի մատնիչներից մեկն սպիտակ տերրորի ձեռքը մատնեց պատանի Մարտոն Վագանին և նրա յեղբայր Անդրին:

Մոտ մի ամիս նրանց յենթարկեցին ամեն տեսակի տանջանքների: Նույնիսկ ցարական սպիտակ տերրորի արյունոտ պատմութիւն մեջ նրանց կրած

տաջանքների հավասարը չկա: Բայց և այնպես նրանք վոչ վոքի չեյին մատնում: Կուսակցութեան բոլոր գաղտնիքները նրանք գիտեյին, սակայն դահիճները նրանցից մի բառ անգամ չկարողացան դուրս կորզել:

Նրանց տանջեցին մի ամբողջ ամիս. նույնիսկ դահիճները հոգնեցին...

...Ու մի մութ գիշեր Դուռայրը ներքե եր տանում յերկու դիակ:

Վաղա՛յ յերկու յեղբայրներն ել որինակելի կոմունիստներ եյին, և հունգարական պրոլետարիատի շարժման պատմութեան մեջ նրանց անունների հետ ընդմիջող կապած է ամենաանվեհեր մարտիկների պատկերացումը:

ՇԱՆԴՈՐ (Ալեքսանդր) ԿՐԱՄԵՐ.

Նա դեռ բոլորովին մանուկ եր, յերբ 1912 թ. ընկավ սոցիալիստական շարժման մեջ և, կարելի չի ասել, վոր նրա մեջ դաստիարակվեց:

Զնայած իր պատանի հասակին, նա դեռ 1914 թվին հասկացալ, վոր սոցիալ-դեմոկրատիան բանվոր դասակարգի շահերն այնպես չի պաշտպանում, ինչպես այդ պետք է պահանջել հեղափոխական բանվորական կուսակցութեանից, և Կրամեռը մտնում է պատանեկան ուղղութիւն կազմակերպութեան մեջ: Բռնկվում է համաշխարհային պատերազմն, ու նրան զինվոր են տանում: Տասնյակ հազարավոր զինվորների կորուստը և արյան գետերն արդեն պարզ ցույց եյին տալիս այն հեղափոխական ուղին, վորի վրա նա պետք է վտար դնի, և դեռ զինվոր ժամանակ: Կրամեռը հակամիլիտարիստական պրոպագանդի մեջ գործոն մասնակցութեան է ունենում:

1918 թիվ... Բուրժուական հեղափոխութեան... Բուրժուազիայի և սոց-դեմոկրատների կեղծ լոզունգները չեն կարողանում խաբել, Կրամեռին, և նա իսկույն հարում է Ռուսաստանից վերադարձած ռազմական զերիների կոմունիստական կազմակերպութեանը:

Նրանք ստեղծում են Կոմունիստական Կուսակցութեան, և Կրամեռն առաջիններից մեկն է, վոր մըտնում է նրա մեջ: Նա անդադար աշխատում է Հունգարիայի Կոմունիստական Յերիտասարդական Միութեան կազմակերպելու գործի վրա: Նրան բանտարկում են, և միայն պրոլետարական հեղափոխութեան և նրան բանտից ազատում: Նա դատախազ է նշանակվում:

Բուրժուազիան հակահեղափոխութեան է կազմակերպում: Բայց հեղափոխական բանակը Կրամեռի ղեկավարութեամբ հերոսական կռվում ճնշում է հակահեղափոխական ապստամբութեան այդ փորձը...

Սակայն սկսվում է Ֆրանսիական և անգլիական կապիտալիստների միջոցներով զինված չեխո-սլովակական իմպերիալիզմի միացյալ հարձակումը, և Հունգարական յերիտասարդ խորհրդային հանրապետութեանը կործանվում է... Կրամեռը մինչև վերջը ղեկը ձեռքին կռվում է և միայն այն ժամանակ, յերբ համոզվում է, վոր դրութեանը բոլորովին անհուսալի չէ, թողնում է Հունգարիան: Նա փախչում է Հարավ-Սլավոնիա, վորտեղ անդադար աշխատում է պրոլետարական վրա: Հայրիտասարդութեան կազմակերպման գործի վրա: Հայրիտասարդական իշխանութեանները նրան ձերբակալում են ու հանձնում հունգարական սահմանային պահակներին, վորոնք նրան դիմավորեցին զրկաբաց. չէ

վոր նախնային եր ամենավտանգավոր հեղափոխական-
ներին: Նրան աննկարագրելի տանջանքներն յեն յին-
թարկում, սակայն դահիճներն անզոր են լինում նրա
արիությանը կոտորել, և յերբ նրան դատում են, նա
համարձակ կերպով շարտում է դատավորներին յերե-
սին, վոր նրանք բուրժուազիայի հլու ծառաներն են:
Նա գիտե, վոր իրեն մահ է սպասում, վորովհետև բուր-
ժուազիան յերբեք չի ներում և վռչինչ չի մոռանում:
Յերբ նրան մահվան են դատապարտում, նա միայն
ժպտում է ու հպարտությամբ հայտարարում. «Իմ գե-
րեղմանիս վրա կարմիր վարդեր կըսնեն»: Մահվան
դատավճիռը հայտնելուց մի ամիս անց, Կրամերը դեռ
զլթայակապ եր: Դահիճները կամենում եյին նրա տան-
ջանքները յերկարացնել: Դատից մի ամիս անց միայն
նրան տարան մահապատժի: Նա դնաց կախաղան «Ին-
տերնացիոնալ» յերգելով: Նրան հանդիպեց քահանան
խաչը ձեռքին—մի գուցե մահից առաջ նա կզղջա... Բայց
Կրամերը միայն հպարտությամբ ծիծաղեց ու գլուխը
բարձրացնելով բացականչեց. «Մենք մեռնում ենք,
բայց մեր գաղափարն ապրում է»:

Ի Տ Ա Լ Ի Ա.

Պաշխտական ռեակցիայի սկիզբն Իտալիայում
պետք է հաշվել 1920 թվի վերջը, բայց ազդային նշա-
նակություն նա ձեռք է բերում ու յերկրի մեկ ծայ-
րից մյուսն է տարածվում միայն 1921 թվի կեսին:

Իտալական յերիտասարդության ֆեդերացիան
մինչ այդ զոհեր ունեցել է: Պատերազմի ժամանակ
բանտում մեռավ **Ֆեդերիկո Մարիոնցցին**: Պատերազ-
մական դործողությունները վերջանալուց անմիջապես
հետո Հոմոմում, վոստիկանություն հետ ընդհարվելու
ժամանակ, սպանվեց պատանի **Տիբերիոս Յամպան**:
1919 թվին Իտալական ֆեդերացիայի Կենտրոնական
Կոմիտեյի դեմ սկսվում է մեծ դատավարություն:

Սակայն խոսել ընդհանուր ռեակցիայի մասին
դեռ չի կարելի: Դեռ չեն հասել այն ժամանակները,
յերբ մի շարաթվա ընթացքում զանազան վայրերում ու
զանազան պատճառներով սպանում են 11 պատանի կոմ-
մունիստի: Ավելի ուշ հասան Տրիեստի կոմմունիստա-
կան յերիտասարդության նահատակության ժամանա-
կը և դավադրությունների ժամանակները, վորոնց
մեջ եյին քաշված յերկարամյա բանտարկությունե-
րի դատապարտված շատ տասնյակ պատանի կոմմու-
նիստներ:

Կոմմունիստական յերիտասարդության նահատա-
կությունը միայն 1921 թ. վերջերումն է լայն չափեր
ընդունում: Սպանվածներն ու բանտարկվածներն ար-

դեն հաշվվում են վոչ թե միավորներով, այլ տասնյակներով և հարյուրներով:

Կոմմունիստների դեմ կատաղած ֆաշիստների զործունեություն լրիվ պատկերը տալը հնարավոր չէ Դոբախտ Մատտեոտին իր հրատարակություններից մեկում փորձեց տալ միայն մեկ տարվա (հոկտեմբեր 1922 թ.—հոկտեմբեր 1923 թ.) ֆաշիստական բոլոր ղոհների ընդհանուր ցանկը, սակայն, չնայած նրան, վոր 150 եջ լցված էյին թվերով ու թվանշաններով, այնուամենայնիվ ցանկը սպառնացուցիչ չէր: Այս յերեք տարվա ընթացքում սպանվածները հազարներով են հաշվում: Հրդեհումների, ծեծերի ու տանջանքների դեպքերը տասնյակ հազարներով են, իսկ բանտարկությունները՝ հարյուր-հազարներով: Զվախենալով սխալվելուց կարելի չէ ասել, վոր, սկսած ղեկավարներից, վորոնք նստել են 10, 15, 20 ամսով և վերջացրած շաքայիններով, վորոնք ավելի տեղ ժամկետներով են բանտարկված, Իտալիայում չկա մի հատիկ պատանի կոմմունիստ, վորը ղեթ մի անգամ բանտարկված չլինի:

Զոհերի ցանկը, թեկուզ կարճ ժամանակամիջոցի համար, չափազանց թերի դուրս կգար, և դրա համար ել մենք բարվոք ենք համարում միայն միքանի ընտրոշ միջադեպեր բերել այստեղ:

Ռեակցիայից ամենից շատ տուժեց Տրիեստ քաղաքի յերիտասարդությունը: Նա արժանի չէ առաջին հերթին հիշատակվելու: Տրիեստը մայրաքաղաք չէ: Նրա բնակչության թիվը 200 հազարի յել չի հասնում: չնայած դրան, նրա ղոհների թիվը ավելի շատ է, քան մյուս քաղաքներինը: Յերիտասարդ կոմմունիստներից — Հ. Յե. Մ. անդամներից — սպանված են 10 մարդ,

նրանց մեջ սեկցիայի կազմակերպչական կոմիտեյի անդամ՝ Մարիո Բերչեն, Պոլայի խմբակի կազմակերպչական կոմիտեյի անդամ՝ Լուիջի Սկալլերը, տեղական կոմիտեյի անդամ՝ Երժիա Տուստոլոզը, խմբերի ղեկավարներից մեկը՝ Ռեդենտորե Սորնիջը, Սան-Ջակոմո թաղի հակաֆաշիստական կազմակերպության ղուլս՝ Բրուցո Տաբոգան և ուրիշները: Տրիեստի սեկցիայի բոլոր անդամներն առանց բացառության բանտարկված էյին: Նրանց մեծ մասը քաշված էր այն դավադրության մեջ, վորի մասին ներքևում խոսք կլինի:

Անկարելի չէ չհիշել ընկերներ Եվեյին, Սկաբա-րեյին և Տրիեստի շատ ուրիշ կոմմունիստների մասին, վորոնք դատապարտված լինելով չորս տարով բանտարկություն, տառապում են, հնարավորություն չունենալով իրենց զործը վերաքննել տալու, այն նըստակով, վորպեսզի անարդար դատավճիռը փոխվի: Ահա Տրիեստի դատավարության համառոտ հաշվետվությունը:

Մեղադրյալներ՝

Վիսսոբիո Վիգալի — ուսանող, Վիսսոբիո Կանցանի — ուսանող, Զուգեպպե Սկաբարե — մասնավոր ծառայող, Մարիո Գլավինա — ելեկտրոտեխնիկ, Ալեսսանդրո Ապոլլոնիո — հյուսն, Մարիո Սիմգիգ — շոֆեր, Ֆրանչեսկո Սոկ — մեքենավար, Վիսսոբիո Ֆուրլուզա — մեքենագործ, Ֆերդինանդո Մոնեսիկ — քարտաշ, Սեանիսլաո Բուսս — քիմիկոս, Ֆերուչիո Կոկոբավից — ուսանող, Ռոբերտո Գուրասին — խոհարար և Ձեկսես Դեման — մեքենագործ:

Վիզալիի հարցաքննությունը.

Առաջին հերթին հարցաքննվեց մուշեցի Վիզալիի Վիզալի, ուսանող, 20 տարեկան:

Պարզ ու ամուր ձայնով նա ասաց հետևյալը. — «Յես կոմմունիստ եմ, մասնակցում եմ պրոլետարիատի կուլտ-կրթական կազմակերպություններին և ինձ հանցավոր չեմ ճանաչում: Յեթե լինեի կոմմունիստական ակտիվ կազմակերպություն, յես այստեղ պաշտպանվելու չեյի գա, սակայն այդպիսի կազմակերպություն, ինչպիսին նկարագրում ե մեղադրական ակտը, յերբեք գոյություն չի ունեցել: Մեր խմբակները պաշտպանությունը մեր գլխավոր նպատակն է յեղել, այդ պատճառով ել յես ընդունում եմ, վոր պայքարի ժամանակ խմբակի վորեւ անդամ վերցրել և պայթուցիկ նյութ նրա համար, վորպեսզի պաշտպանի մեր կուլտուրական ձեռնարկությունները: Ընդհանուր առմամբ յես ուզում եմ ասել, վոր, յեթե ֆաշիստները հարձակվեյին մեզ վրա ուսմանը, ապա մենք ել նույն ձևով կպատասխանեյինք: »

Ահա թե ինչու՞ն և կայանում մեր դավադրությունը:

Այժմ յես պատմեմ այն տանջանքների մասին, վորոնց յես յենթարկվել եմ, իհարկե վոչ բոլորովին նրա համար, վորպեսզի յերգվյալները կարեկցությունը շարժած լինեմ, վորովհետեւ վոչ յես, վոչ իմ ընկերները չենք խնդրել, վոր ազատեք մեզ, այլ միայն կոչ ենք անում արդարություն նրա համար, վորպեսզի պարզենք, վոր միջանի խոսքեր և ցուցմունքներ ուրիշ վոչինչ են, քան կրած տանջանքների հետևանք:

Տերը ինձ բերին բանտարկության վայրը, կապիտան Ֆաշիստին առաջարկեց ինձ բոլորը պատմել: Յես հրաժարվեցի: Այն ժամանակ ինձ տարան պատժարան (կարցեր), վորտեղ ինձ նորից առաջարկեցին ամբողջը խոստովանվել: Բայց վորովհետեւ յես շարունակեցի հրաժարվել, թափվեցին ինձ վրա և սկսեցին սոսկալի կերպով տանջել. քաշում եյին մազերս, ծեծում եյին ցուլի լախերով, ապա սուր գործիքով թափեցին բերանիս, կտրեցին վերին շրթունքս: Յես վայր ընկա: Կիսաուշագոնաց դրություն մեջ ինձ կապուսեցին և, յերբ յես ուշքի յեկա, հատակ մաքրելու ջնջոց կոթեցին բերանս, վորպեսզի չկարողանայի դուռալ: Յերեք սր յես վոչինչ չկերա և այդ ժամկետն անցնելուց հետո բժիշկ Մորցիանին ինձ դեղ տվեց — լուծողական:

Մեզ մեղադրում են նրանում, վոր մենք կամենում եյինք հանցագործ ընկերություն կազմակերպել: Յես կարծում եմ, վոր հանցագործները հանդիսանում են նրանք, ովքեր մեղադրում են անմիտ և անմեղ մարդկանց: Նա, ով հանցագործ է անվանում կոմմունիստներին, վորոնք գաղափարի համար են տուժում և կազմում են կառավարության կողմից ճանաչված կուսակցության մի մասը, առողջ բանականությունից դուրի ե: Քանի դեռ այս կուսակցությունը լեզալ կըճանաչվի, յես պահանջում եմ, վոր մեզ անվանեն կոմմունիստներ, այլ վոչ թե հանցագործներ: Յեթե վաղը կոմմունիստական կուսակցությունը կառավարություն կողմից չճանաչվի, մենք հանցագործներ չանվան տակ հպարտությունը կկանգնենք ձեր առաջ: Հանցագործ կազմակերպություն գոյություն ունի

միայն պրովոկատոր-գործակալ Ոստավիո Գրոսսմանի (առաջ ավստրիական բանակում պորուշիկի պաշտոնով ծառայող) յերևակայության մեջ, վոր ռոճիկով ծառայում եր պորուշիկ Ֆաջինի մոտ»:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՏԱՆՋԱՆՔՆԵՐ.

Յերկրորդ հերթին հարցաքննեցին 19 տարեկան ռուսանող Կանցանիին, վորը իր բանտարկության մասին պատմեց հետևյալը.

«Յերբ ինձ բանտ տարան, այնտեղ նստող Վիդալիից և Սկաբարիից յես իմացա, վոր մեզ մեղադրում են դավադրության մեջ և, վոր ինձ սպասում են մարմնային տանջանքները: Վիդալիին, Սկաբարիին և Տամասկիչին արդեն տանջել էին: Մյուս առաւիտ, բանտարկությունից հետո, բրիգադիր Սկիֆանոն հրամայեց ինձ մերկացնել, ինձ կապեցին թուով ու բարձրացրին, վորը կտրում եր մարմինս, մինչև ուժասպառ լինելս ինձ ձեծեցին փայտեբով, ու այդ տանջանքների ժամանակ ասում էին՝ «խոստովանվիր, խոստովանվիր»: Այն ժամանակ յես խոստովանվեցի, թե ինչ, չգիտեմ:

Վիդալիի մայրը, վոր բանտը կերակուր եր բերել վորդուն, նույնպես յենթարկվեց ձեծի ու տանջանքների:

Նախագահ.— Յուրյի մեջ դուք մասնակցել եք:

Մեղադրյալը.— Այո, Պասկվայի ցույցին մասնակցել եմ, բայց ինձ մոտ ունեմ չի յեղել:

Նախագահ.— Դուք մի ուրիշ ցույցի մասին ել գիտեյի՞ք արդյոք:

Մեղադրյալ.— Այո, նրա մասին ինձ պատմեց պորուշիկ Ֆաջինին: Իմ նախընթաց ցուցմունքների անճշտությունը բացատրվում ե այն մարմնային տանջանքներով, վորոնց ինձ յենթարկեց բրիգադիր Սկիֆանոն:

Նախագահ.— Ի՞նչ կապ ունեք այդ բոլորի հետ Գրոսսմանը:

Մեղադրյալ.— Մեր կազմակերպությունը պաշտպանելու համար նա մեզ չափազանց բարդ ծրագիր առաջարկեց, վորը մենք չընդունեցինք, վորովհետև այն կատարելու համար շատ մեծ ուժ եր պահանջվում:

Նախագահ.— Հետևաբար Գրոսսմանը ձեղանում ել եր գործակալ-պրովոկատոր:

Մեղադրյալը.— Այո, իրոք նա մեզ մոտ ռոճիկով եր: Ինձ թվում ե, թե նրան մեզ հետ միասին ձերբակալեցին, իսկ հետո ազատեցին:

Ընկ. Սունդերսիկն այսպիսի արտահայտությունով ե նկարագրում իր կրած տանջանքների պատկերը. «Վոստրիկանները ձգտում էին սպառնալիքներով ինձնից խոստովանություն կորզել: Բրիգադիր Սկիֆանոն ու Բալյոնին ինձ լլկում էին»:

Ստանիսլավ Բուսսը, վորը բանտարկվել եր գիշերվա ժամը 2-ին իր ազգականների աչքի առաջ, սոսկալի ձեծվեց այն ժանդարմների ձեռքով, վորոնք յեկել էին նրան բանտարկելու:

Անշլիտ Բաուդելը և Ֆերրուչիո Կոկորավիցը նույնպես ցուցմունք են անում, վոր իրանց տանջել են:

Խոհարար Գուրատինային մերկացրած ձեծեցին փայտեբով և ապա կես ժամ շարունակ ծորակի տակ

թըջեցին ջրով, թույլ չտալով նրան, վոր հագնվի դիշերը, նստացրին նկուղում: Առավոտյան նրան կապոտեցին և այնպես պինդ, վոր նա ուշագնաց չեղավ: Այս բոլորը տեղի յե ունեցել միայն մի քաղաքում, սակայն, նույնիսկ մենակ Տրիեստի համար, այս ցանկը լրիվ չէ:

Տրիեստի յերեսասարգ կոմմունիստների կրած բոլոր կորուստները ցույց տալու համար պետք եր այստեղ առաջ բերած տուժածների պատմածներին ավելացնել ֆաշիստների տերրորի արտահայտութունների տասնյակ ուրիշ վկայությունները:

Իտալիայում 5,000 քաղաք ու գյուղաքաղաքներ կան, և հասկանալի յե, վոր հաշվել մեր կաղմակերպության բոլոր զոհերը դրեթե հնարավոր չէ: Այն ընկերներին, վորոնք ինչ կերպ ել ուզում ե լինի, կամենում են դադարի կաղմել Իտալիայում ֆաշիստների կողմից կոմմունիստների վրա կատարած բռնությունների մասին, մենք առաջարկում ենք կատարել մի հասարակ թվարանական գործողություն՝ բոլոր այստեղ նկարագրածներն ավելացնել 65,000 անգամ: Ստացված թվանշաններին իսկ իրականությունը դարձյալ կկերպանցի:

Զուգեպպե Բեռի,
Ֆերիտասարգության կոմիտեի
գործկոմի անդամ:

ԲՈԼԳԱՐԻԱ.

Բոլգարիայում սեպտեմբերյան ժողովրդական ապստամբության ժամանակ սպանվածների ու բանտարկվածների քանակի մասին տեղեկությունները նրա ճնշվելուց հետո յել դեռ լրիվ չեն: Ինքը կառավարությունը մինչև որս այդ մասին վոչ մի թվական տրվյալներ չի հրատարակել, և կասկած չկա, վոր իրեն վարկաբեկելուց վախենալով, հետագայում ել չի հրատարակի: Սակայն, կառավարական թերթերի մեջ շատ սակավ ու պատահմամբ թափանցած տեղեկություններից յեբևում ե, վոր սպանվածների թիվը 5,000 մարդուց անցնում ե: Բոլգարիայի սպիտակ տերրորի զոհերի ողբության արտասահմանյան կոմիտեյի ստացած հարգազրուցությունները հաստատում են վերը բերած թվանշանների ճշտությունը: Գուցե կարելի յե նույնիսկ մտածել, վոր այս թիվը փոքրացրած ե: Կառավարությունն իր պատժիչ եքսպեդիցիաներով այնպիսի դադանություններ ե կատարել, վորոնց դեմ նսեմանում են այն բոլոր դաժանությունները, վոր արձանագրված են պատերազմների և հեղափոխությունների պատմության մեջ:

Մենք այստեղ բերում ենք «Կուլտուրական» պրոֆեսոր Յանկովի կառավարության, գլխավորապես յերիտասարգության վրա՝ կատարած դադանությունների դեպքերից միայն ամենաբնորոշ մասը:

1. Վիլիլի Յոնի (Ֆերդինանդի դավ.) այրվեց ժողովրդական հին ուսուցիչ Խվ. Դրագանովի տունը և

դնդակահարվեց վերջինի վորդին Կ. Յե. Մ. 19 տարեկան անդամը:

2. **Ղուլե-Մահլա** գյուղում (Լոմ) համփաները (կուլակները) — տերտերի դրացիները — նրան վորպես ընդհատակյա կոմմունիստի, մատնացույց արին կառավարական իշխանություններին: Կառավարական ղինվորները նրան կալանավորեցին, տղայի հետ (Կ. Յե. Մ.: անդամ) միասին կապեցին սայլին ու յերկուսին միջանի վերստ քարշ տվին գետնի վրա, մինչև վոր զոհերը ստացած վերքերից մեռան:

3. **Սոֆիա**. — Բոլգարական մայրաքաղաքի փողոցներից մեկում վոստիկանների ձեռքով սրախողխող յեղան յերկու սլատանի, թուռցիկներ տարածելու համար: Նրանցից մեկի անունը **Լյուբոմիր Սոմբարով**ն էր:

4. **Դոլնա-Բանիա** գյուղում (Զամոկով) մյուս յերրիսասարդ ընկերների թվում սպանվեց ընկ. **Խալիմ Լեվին** — (այդ գյուղի) Կ. Յե. Մ. քարտուղարը:

5. **Կյուստեցիլ**. — Մեղտեմբերի 27-ին յերեկոյան ժամը 7-ին վոստիկանապետի հրամանով բանտից դուրս տարվեցին ու քաղաքից դուրս, անտառում սպանվեցին գյուղացիական յերրիսասարդության թերթի խմբագիր **Ռազոսլավ Նոսով**ը և Գյուղացիական Յերրիսասարդության Միության Կենտրոնական Կոմիտեյի անդամ **Յուրգան Միխայլով**ը:

6. **Բաղարշիկ**. — Այդ քաղաքում կատարված գահանությունները բավականին մանրամասն կերպով նկարագրված են Վիեննայի «Արքայտեր-Յայտունգ»-ում բոլգարացի մի սոցիալ-դեմոկրատի թղթակցության մեջ: (Բոլգարական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը այդ բոլոր չարագործությունների հա-

մար սլատասխանատու յի, վորովհետև մեկ ներկայացուցիչ ունի Յանկովի կառավարության մեջ և թե ապստամբությունից առաջ, թե ապստամբությունից հետո թշնամանք եր տարածում կոմմունիստների ու ապստամբների դեմ):

«Բոլգարական Ռեզոլյանց», — գրում ե թղթակիցը, — կոչվում ե **Սարաբույ** և Սոֆիա-Կոստանդնուպոլիս յերկաթուղու վրա մի կայարան ե: Անթիվ անմեղ զոհեր — գյուղացիներ, բանվորներ, ինտելիգենտներ, պատանիներ, կանայք, յերեսաներ ընկան այնտեղ, Յանկովի կառավարության գնդացիային կրակի տակ: Բոլգարիայում կատարված սպիտակ տերրորի գաղա-նությունների մասին համաշխարհային հասարակական կարծիքը հավաստի քիչ բան ե իմացելը:

Ըստ ապա՝ «Այն ժամանակ կառավարությունը կոստանպոլ դորքերի ուժեղ ջոկատներ ուղարկեց, գլխավորապես մակեդոնացիներին (աղգայնականներին) և վրացիները կոզակներին, վորոնք համարյա մի ամբողջ շաբաթ (սեպտեմբերի 23—29) տևող կռիվից հետո ջախջախեցին ապստամբներին: Բոլոր այստեղ գերի վերցվածները նրա հրամանով սպանվեցին: Այսպես, որինակ, 200 գերի սպանվեցին գնդացիային կրակով: Բաղարշիկի գիմնագիայի Երջանավարտ Բաճ յեվ Կիցգ հոգուց թափ յեվ վեցին, վորոնք Սարաբույի շրջակայքից շտապում էին ապստամբներին ոգնելու (վոր այն ժամանակ արդեն սպանված էին), գերի բռնվեցին և, չնայած նրան, վոր լուրջ մասնակցություն

* Որֆգովայան անտառ — Հոնգարիայում կոմունիստների մուսսոլայան մահապատիժների տեղը:

չեյին ունեցել կովի մեջ, իրար շղթայվեցին ու Բազարջիկի ճանապարհին, ուր իբր թե կամենում էյին նրանց տանել, զեզացիրային կրակով ցուցայես սպանվեցին: Նրանց թվում գտնվում էր Սերուկովո գյուղացի ուսանող Բուչկովը: Նա վերավորվեց ձեռքից և չնայած նրան, վոր միքանի զինվոր նրան պաշտպանեցին, այնուամենայնիվ նրան դանակի հարվածով սպանեցին: Մեր ունեցած տեղեկությունների համաձայն, այդ զինազինատների հետ միասին սպանվեցին հետևյալ յերիտասարդ ընկերները՝ Կիրիլ Պոպովը, ուսանող Արամա Զվեսանսկին, Պազանջիկ քաղաքի Կ. Յե. Մ. քարաուղար՝ Չեբալիզովը, Ղարա-Մուսալ գյուղի Կ. Յե. Մ. կազմակերպության քարաուղարը:

7. Լուսիչեվո գյուղը (Բազարջիկի մոտ) կառավարական զորքերի ձեռքով հիմնահատակ կործանվեց: Գյուղացիական միության բոլոր անդամներն ու կոմմունիստներն սպանվեցին իրենց ընտանիքների հետ միասին:

8. Ֆիլիպպոպոլ.—Այստեղ բանտից դուրս են տարված ու դադանաբար սպանված գեռ մինչև ապրտամբուլյունը ձերբակալված հասակավոր քառասունամյա կալանավորները: Մարդկային կերպարանք ունեցող դադանները նրանցից շատերի քթերը, ախանջները, լեզուները և այլն կտրեցին: Այդ զոհերի թվումն էյին կուսակցության, արհմիության և պատանեկան կազմակերպությունների անդամները: Բացի դրանից, Ֆիլիպպոպոլում «անհետ» կորան դարձյալ յերկու հարյուրից ավելի մարդ: Նրանք բանտարկված էյին մինչև ապստամբությունը և այժմ բանտարկյալների թվում չկան:

9. Փերդիմանգ քաղաքում կոտորվեցին անգամ Կիվանդանոցում գտնվող վերավոր հեղափոխականները: Բժիշկներ Պլիեզև ու Վեչեվը և կամավոր զթության քույրեր, Կ. Յե. Մ. անդամներ, Վերա Դամյանովան ու Կառյա Սպասովան նույնպես չխնայվեցին: Այս ու Կառյա Սպասովան և Բերկովիցում, բոլոր դպրոցների քաղաքում, ինչպես և Բերկովիցում, բոլոր դպրոցները, զորանոցները և շատ ու քիչ խոշոր մասնավոր տները, զորանոցները և շատ ու քիչ խոշոր մասնավոր տները բանտերի վերածվեցին, վորոնք լեփ-լեցուն էյին գերի ապստամբներով: Այստեղ չխնայեցին անգամ կանանց և յերեխաներին:

ՍՊԻՏԱԿ ՎՐԵԺԸ.

Նրանք 18 հոգի էյին: Առջևից գնում էր վրան գելյան սպան, կողքերից ու յետևից — վրանգելյան զինվորները *:

Գերեխների մեջ գնում էր մի ջահիլ աղջիկ: Յես չեմ սխալվի, նա 17 տարեկանից ավել չեր լինի: Հիշում եմ, փոքրիկ սպիտակ շարֆը վզովը գցած, նա բռնել էր ծայրերը իր ձեռքերով: Քայլում էր կայտառ, ասես չկասկածելով դալիք մահապատժի մասին:

Մինչդեռ ամեն ինչ պարզ եր՝ չորս զինվոր, վոր գնում էյին գերեխների յետևից, բահեր էյին տանում — ամեն մեկը յերկու-յերեք հատ Բահերն իրար կպան ու զընգացին այնպես, վոր յես հեռվից լսեցի նրանց ժանգոտ զնգոցը:

Դատապարտվածներին խճուղով տանույմ էյին դեպի գետը, վորի ափերին, դեղին տվող մացառուտի մեջ սեին էյին տալիս գնդակահարված հեղափոխականների յեղբայրական գերեզմանների թուրմները:

* Բոլորիսլայում եմիգրանտ — վրանգելականներ շատ կան:

Մի մանրամասնութիւնն էմ մոռանալ Յես դի-
տակով նայեցի ու տեսա՝ պատանի հեղափոխականու-
հու բաց փոքրիկ սե գլխին իրիկնային արեգակի տակ
կարմրին ե տալիս ժապավենի կապը (бантик): Ան-
մեղ, հուզիչ քնքշությամբ, նա կարմրին եր տալիս
հեղ, գրեթե մանկական բողոքով ընդդէմ այն գաղա-
նային վայրագության, վորի հազարմեկերորդ ակտը
կատարվելու յեր կես ժամից հետո ..

*
* *

Նրանց հերթով տանում էին բլուրի մոտ:

— Չոքեցէք, — գոռում եր սպան:

Վոմանք լռությամբ ծունկի յեկան, մյուսները
հլարողացան, տասնյակ գնդակներով վիրավորված, նը-
րանք ընկան սեահողի վրա ու ասես խորհելով, բլու-
րից գլորվում էին խոտի վրա...

*
* *

Գերեզմանի մոտ մի սլատանի կար: Նրա շեկ մա-
ղերը խոպուլիկներով թափվում էին յերեսին. ուղ-
ղելով նրանց, նա ձեռքով շփեց գլուխը, ապա ձեռքով
բարձրացրեց վերև ու տարորինակ ուրախությամբ,
ամբողջ կրծքով գոչեց.

— Կեցցե աշխատավորության հաղթութիւնը:

Յեւ կրծքից ու քթարմատից վիրավորված, ըն-
կավ գերեզմանի մեջ:

*
* *

Վերջինը պետք է ջահել աղջիկը մեռներ:

Սպան կիսաձայն ինչ-վոր բան ասաց զինվորնե-
րին, նրանք պտտասխանեցին նրան սարսուռ ազդող
ժպիտներով. սպան ե յերկու զինվոր աղջկան տարան

մացառուտը, ե 2.3 բոլբոլից հետո կաղինի մացառներ/
միջից դուրս թռան հոգեարքի սարսափի ե հուսահա-
տական ընդդիմության ճիչեր. ապա նրանք մեղմա-
ցան, իսկ մի բոլբո հետո իսպառ կտրվեցին...

Զինվորներն ականջ դնելով ու անհամբեր նայե-
լով դեպի մյուս կողմը, ուր ծնվում ու անգործության
մեջ մեռնում էին մեղմ հառաչանքները, հերթի կան-
դնեցին...

*
* *

Ճյուղերը կոտրատելով, ձեռքերս ճանկոկելով յես
վաղեցի գետի կողմը:

Յերբ յես արդեն մյուս արևմտե էյի, հեռվում լըս-
վեցին կրակոցները: Յես գիտեյի՝ գերեզման ընկավ
կարմիր բանտիկով սեահեղ գլուխը:

Լ Ե Ղ Ա Ս Տ Ա Ն .

Լեհաստանի պարոնայք մենչեկները ժխտում են Լեհաստանում կատարված սպիտակ տերրորի սարսափները: Մենք փաստեր կբերենք:

Մեր հիսուսական մեջ գեո քարմ ե լեհական սպիտակ տերրորի մոտակա անցյալի գոհը—մեր անմուտց Եճգելը, վոր կախվեց լեհական ժանգարմաների նեոֆոլ:

Ընկ. Սիրահեղինը, բանվոր յերիտասարդության «Գոլթան» շաբաթաթերթի խմբագիրը, դատապարտված ե 10 տարով տաժանակիր աշխատանքների:

Լորա Կլեպեները, 19 տարեկան, Լեհաստանի Կոմյերիտմիության կոչերը տարածելու համար, մայիսի 13-ին Գրոգնոյում դատապարտված ե 4 տարով տաժանակիր աշխատանքների:

Լոնոն գերագույն դատարանը, կոմյերիտական պրոպագանդի համար 12 յերիտասարդ տղաների ու աղջիկների դատապարտեց յուրաքանչյուրին յերկու տարով բանտարկելության:

Վարձավայում 1924 թվի ապրիլի 6 տեղի ունեցավ կոմյերիտականների դատավարությունը, 31 հոգի, Կոմյերիտմիությանը պատկանելու համար, դատապարտվեցին 50 տարով բանտարկելության:

Լվովում վերջերս սկսվեց 10 յերիտասարդ բանվորների դատավարությունը, վորոնք մեղադրվում էին կոմյերիտմիության անդամ լինելու մեջ:

Մեղադրվողներից ամենամեծը—20 տարեկան եր:

Իսկ ինչ ե կատարվում Լեհաստանի դեմոկրատական հանրապետության բանտերում:

Ապրիլի 13-ին յերեք յերիտասարդ ընկերներ—**Հերոնը, Ֆելզը և Վ Լեվինսոնը** ձերբակալվեցին և բանտ դրվեցին **Զամուսյալում**:

Վորպեսդի նրանց ստիպելին մեղադրական ցուցմունքներ տալ, վոստիկանությունը դիմեց հրեշային տանջանքների:

16 տարեկան Հերոնը միջանի անդամ կախվեց (կեղծ ողակով): Յերբ նա գիտակցությունը կորցնում եր, նրան հանում էին ողակից: Քննիչի հարցերին պատասխանելուց հրաժարվելուց հետո նրան սարսափելի ծեծեցին:

Հերոնն այժմ հիվանդանոցում ե: Ֆելզը, վոր տանջանքներից հետո փոխադրվեց ուրիշ բանտ, անհետ կորավ: Հայտնի է, դեռ կենդանի յե թե վոչ:

Պոնե-Սենե-Կրուա բանտում քաղցից ու համաճարակից մեռան հարյուրից ավելի բանտարկյալներ:

1—6 տարով բերդարկելության դատապարտված կոմյերիտականների ցուցակ.—

Ս.գամ Գրիգորեզ—յերկու տարով բերդարկելության:

Միխայիլ Զաքիկովսկայա և **Հուգիթ Ս.բ.բամովսկայա**—1 տարի 6 ամիս բերդարկելության:

Յեվա Շպեյզման, Պ. Հելլեգոս, Է.Լիգա Կովենսկայա և **Խանա Ռոգեն**—3 տարով բերդարկելության:

Իգնատի Բիրենցովից, Լեոն Սոլովյիկ, Ալե.բուսոգր Սվիտենովսկի, Ջեյլով Ռիսենկովսկի, Սգուլե Ռոգենբերգ, Շիգրա Հոլլովաստեր, Լյուբա Կովեն.

սկայա և Մարկոս Սամուել—3-ական տարով ծանր բանտարգելության:

Եզովարդ Ուզգաճակի—3 տարի 6 ամիս ծանր բանտարգելության:

Բրոնիսլավ Բերման և Արոն Զակհեյմ—4 տարով ծանր բանտարգելության:

Ֆերգինանգ Ֆիլդերբաում (Բոգդան Չարսկի) և Գրաիա Զայցբերգ—5 տարի ծանր բանտարգելության:

Յակով Ֆիսսելցայիլեր—6 տարով ծանր բանտարգելության:

30 ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.

«Յերեսուն կոմյերիսականների» գործը պատեց յեվրոպական մամուլում:

«Դատական քննությունը» բացվեց 1924 թվի մարտի 26-ին:

Մեղադրական աթոռի վրա գտնվում էին Լեհաստանի Կոմունիստական Յերիտասարդության Միության 2 անդամները—16 տարեկան, յերեքը—17 տ., տասներկուսը—18 տարեկան և յերկուսը—21 տարեկան, ընդամենը 25 դեռահաս պատանիներ և աղջիկներ: Հինգ մեղադրյալները բարվոք համարեցին իրենց չենթարկել բուրժուապետական դատարանի անաչառությանը, դրա համար ել դատավարության չնեղակայացան:

Մեղադրական աթոռի վրա նստողներից յերկուսը նախնական կալանքի տակ մնացել էին 22-ական ամիս, իսկ 9-ը 8-ական ամիս:

Իբրև վկաներ դատավարության ժամանակ հան-

դես յեկան 120-ից ավելի մարդ, նրանց թվում Լեհաստանի հանրապետության «Գաղտնի վոստիկանության» գրեթե բոլոր ղեկավարները. դատարանում յերեքին և՛ հայտնի դահիճ Սպարսկին, և՛ կալանավորված քաղաքական կոմիսարներին սպանող Խվատը, և՛ Լոձի պահնորդական բաժնի պետ Նեձելսկին, և՛ յերիտասարդության մեջ լրտեսության մասնագետ—Պոդոժելսկին, «գորբուն», Մալինովսկին և տասնյակ ավելի ու պակաս հայտնի դահիճներ, պահնորդականներ, ժանդարմներ և պրովոկատորներ:

«Գործի» ելուցյունը հետևյալն էր՝

1921 թվի սեպտեմբերին Վարշավայում հիմնվեց «Մերձ-Վիսլայի բանվոր յերիտասարդության ակումբ», վորի ծրագրի մեջ մտնում էին ուժեքատներ և դասախոսություններ կազմելը, գիտության տարբեր ճյուղերի կուրսեր և խմբակներ կազմակերպելը—մի խոսքով ակումբի խնդիրները սահմանափակվում էին ինքնակրթության աշխատանքի սահմաններում:

Ակումբի կանոնադրությունն ու ծրագիրը հաստատված էին Վարշավայի կառավարական կոմիսսարի կողմից:

Սակայն սոցիալ-տնտեսական գիտությունների ուսումնասիրության պրոցեսում բանվոր յերիտասարդությունը առիթ ունեցավ ծանոթանալու մարքսիզմի հիմնական սկզբունքներին, վոր ըստ տրամաբանական հետևողության, ակումբի անդամների մեջ առաջ ընկեց վառ հետաքրքրություն դեպի մարքսիզմի պրակտիկները—դեպի Լենինը, դեպի կոմունիստական կուսակցությունը, դեպի Խորհրդային Ռուսաստանը, դեպի պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան: Խմբակ-

ների այս նոր ուղղությամբ կատարած աշխատանքների հետևանքն յեղավ այն, վոր ակումբը կոմմունիստական կազմակերպության ընդլայն ստացավ, վորի մասին յերկու «քրիստոնեական դեմոկրատներ», վոր չարաբաստիկ թյուրիմացությամբ նույնպես հաշվում էին ակումբի կազմի մեջ, հայտնեցին վոստիկանության և պահնորդական ինստանցիաներին (աստիճաններին):

Վերջինները յեկան ակումբի անդամների նիստերից մեկը, ձերբակալեցին պատանիներին, բռնազրավեցին «կոմմունիստական Մանիֆեստը», «Անտի-Դյուրինգ»-ը և Լենինի «Պետութուն և հեղափոխութունը»:

Դատավարության ժամանակ պահնորդականներն ու պրովոկատորները վկայեցին, վոր մեղադրյալները կազմակերպում էին «ընդհանուր դպրոց» լոգոնգով ցույցեր, վոր միտինգներում նրանք կանգնում էին կոմմունիստ Դոմբալի կողքին, վոր ժողովներում նրանք քննադատում էին Լեհաստանի այժմյան կառավարութունը, վոր վերջին հաշվով նրանք ձգտում էին դոյութուն ունեցող կարգի տապալմանը:

Վկայելով պատանիների հանցագործութունների մասին, պահնորդականներն ու պրովոկատորները շեշտելովում էին, հակասության մեջ ընկնում, խառնում էին թվականները, մոռանում էին անունները, տեղերն ու հանգամանքները, բայց յուրաքանչյուր անգամ նրանց ոգնության էին դալիս կամ նախագահը, կամ դատախազը և դրությունը փրկում:

Բիրտ կերպով բեմադրված (инсценированного) դատավարության հետևանքով կոմյերիտական Ֆակով Ֆիսեբեցպիլերը դատապարտվեց 6 տարով ծանր բան-

տարգելության, յերկուսը—5 տարով, մեկը—3¹/₂ տարով, վեցը—3 տարով, հինգը—2 տարով. բերդարգելության, մեկը—2 տարով, յերկուսը—1¹/₂ տարով, իսկ չորսն արդարացան:

Դատավարութունը վերջացավ Լեհաստանի դատարանի պատմության մեջ չտեսնված՝ դատապարտվածների ցույցով: Իր դատանությամբ անգամ պեպեհսովցիներին ապշեցնող դատավճռին կոմյերիտականները պատասխանեցին «Ինտերնացիոնալ» յերգելով, վորով առաջ բերին անպատմելի իրարանցում դատավորների և հասարակության մեջ, վորի մի մասն արագ կերպով հեռացավ, իսկ մյուս մասն իր ձայնը միացրեց դատապարտված կոմյերիտականների հուզիչ-ուրախ խմբերին:

Ե Ն Գ Ե Լ.

1918 թվին, յերբ Լեհաստանը նորից ձեռք բերեց վաղուց կորցրած իր անկախութունը, յերիտասարդութունը, ինչպես մի մարդ, վոտքի կանգնեց յերկրի պաշտպանության համար: Յերիտասարդութունն այդ ազատութունը յերկարատե եր համարում: Նա վորտեազատութունը յերկարատե եր զիտենալ, վոր այդ ազատութունը շեշտելով եր զիտենալ, վոր այդ ազատութունը ե միայն բուրժուազիայի համար, —ազատութուն ե միայն ծածկել ամեն տեսակ կեղծ լոգոնգների տակ: Իսկ յերբ բուրժուազիան առաջ քաշեց «հայրենիքը վտանգի մեջ ե» լոգոնգը, ապա Լեհական յերիտասարդութունը գլխարկներին ծաղիկներ ամբացնելով, առանց մտածելու գնաց հանրապետության համար մեռնելու:

Այն ժամանակ բուրժուազիայի խաղերը միայն շատ քչերը հասկացան:

Եճգեյիճ ևս, վոր ծնվել է 1904 թվին բանվորական ընտանիքում, բռնում է այդ ազգասիրական վոգեկորությունը, նա լեհական բանակի մեջ կամավոր է մտնում: Նա մասնակցում է ռազմական գործողություններին ընդդեմ կարմիր բանակի: Այն ժամանակ պատանի ենգելը չեր հասկանում, վոր խաղված է:

Մի անգամ յերիտասարդ զինվոր ենգելի ձեռքը մի թուղցիկ է ընկնում, վոր կոմսունիստները տարածում էյին զինվորների մեջ, և ենգելն իսկույն տեսնում է այն թակարդը, վորի մեջ նա ընկել էր, տեսնում է, վոր նա ազատություն համար չի մարտնչում, տեսնում է, վոր նրանք, զինվորները, բուրժուազիայի հրամանով խլում են բանվորների ազատությունը: Նա տեսնում է, թե ինչպես են մահապատժի յենթարկում բանվորներին, ինչպես են ծեծում կանանց և յերեխաներին: Նա իսկական աչքերով տեսնում է, թե ինչպես են բանտերը լցվում անմեղ, իրենց գաղափարի համար մարտնչող բանվորներով ու գյուղացիներով:

Ու ենգելը, յերեկ դեռ կուլը, խաղված, բուրժուազիայի ձեռքով կուրացած զինվորը, դեն է գըցում զինվորական վերարկուն (շինելը), բանակից հեռանում: Նա աշխատանք է գտնում Լոձում, շուտով կապ է հաստատում կոմյերիտմիություն ընդհատակյա կազմակերպության հետ և մտնում է նրա շարքերը: Այն որվանից, յերբ ենգելը դառնում է կոմյերիտմիության անդամ, նա մասնակցում է միուլթյան բոլոր աշխատանքներին:

Դեռ բանակում յեղած ժամանակ ենգելը մտերմանում է մի պատանու, Վոմն Լուչակի հետ, վորը նույնպես մտնում է կոմյերիտմիության մեջ: Յեկ ահա, հենց այն որվանից, յերբ Լուչակը կոմսունիստական յերիտասարդություն մեջ խցկվեց, սկսվում են ամենաակտիվ, ամենավստահելի ընկերների ձերբակալությունները: Ամբողջ կազմակերպությունը գիտեր, վոր նրա շարքերում մատնիչ կա, բայց յերկար ժամանակ չեր կտակածում նրա ով լինելու մասին: Վերջիվերջո իմացան, վոր մատնիչը—Լուչակն է: Նրան իսկույն ևեթ դուրս վոնդեցին կոմյերիտմիությունից, բայց, այնուամենայնիվ, նա կարողացավ վոստիկանություն ձեռքը մատնել կազմակերպության գրեթե բոլոր անդամներին:

Այդ դեպքից հետո Լուչակը ծառայության մտավ պահնորդական բաժնում (охранка) և սկսեց ավելի հալածել կոմյերիտականներին: Իբրև նախկին կոմյերիտական, նա լավ ճանաչում էր բոլոր իր նախկին ընկերներին, և ընդհատակյա կազմակերպության հետքը գտնելը նրա համար դժվար չեր:

Ենգելը գիտեր, վոր հենց վոր Լուչակը գտնի ընդհատակյա աշխատանքի հետքը, ամեն ինչ կորած է: Նա լավ էր ճանաչում իր նախկին ընկերոջը և չեր կասկածում, վոր կազմակերպության կործանումը ամենամոտիկ ապագայի խնդիր է, և դրա համար ել վճռեց վերացնել Լուչակին: Նրա համար դժվար չեր գտնել Լուչակին և հանդիպելու ժամանակ ատրըճանակը հանեց ու վեց հարվածով գլորեց մատնիչին, վորն և իր հետ գերեզման տարավ նաև ընդհատակյա կազմակերպության դադարիքը:

Ենգելն իսկույն ևեթ բռնվեց և հանձնվեց զին-
վորական-դաշտային դատարանին, վորը, իբրև սարսա-
փեցուցիչ որինակ, 20 տարեկան պատանուն մահվան
դատապարտեց: Դատավճիռն ի կատար ածվեց մայիսի
17-ին առավոտյան ժամի 4-ին: Վերջին խոսքերը,
վորոնցով Ենգելը դիմեց իրեն գնդակահարողներին,
էյին՝ «Կեցցե համաշխարհային հեղափոխությունը»:

Լեհական բուրժուազիան Ենգելի մահապատժով
հույս ունեւր կոմյերիտներին սարսափեցնել: Բայց նա
սխալվեց, վորովհետև Լեհաստանի կոմյերիտությունը
յերդվեց Ենգելի գերեզմանի վրա, վոր չի հան-
գըստանա, մինչև վոր խորհրդային Լեհաստանում ար-
ձան չկանգնեցնե Ենգելին: Բայց առանց զբաւ ել Են-
գելի հիշատակն ամբողջ աշխարհի բանվոր յերիտա-
սարդության սրտերում հավիտյան կապրի:

ՊԱՌԻԼԻՆԱ ՄԱՅԵՅԵՎՍԿԱՅԱ.

Համալսարանի ունկնդրուհի քսան տարեկան յե-
րիտասարդ աղջիկ Պաուլինա Մացեյսկայան, կապը
խզելով Լեհաստանի «սոցիալիստական» կուսակցու-
թյան հետ, 1920 թվի հուլիսին միացավ Յերիտասար-
դության կոմմունիստական Միությանը:

Թողնելով համալսարանը, նա փոխադրվում է
վերին Սիլեզիա, լեհական շովինիզմի այս ամբողջը,
ամբողջովին անձնվիրությամբ հափշտակված ու վո-
գևորությամբ անձնատուր է լինում Սիլեզիայի պրո-
լետարական շրջանների աշխատանքներին:

Յեռուն կազմակերպչական ակտիվ գործունեյու-
թյանը զուգահեռ պատանի կոմմունիստուհին խնամ-
քով ուսումնասիրում է մարքսիստական գիտական
գրականությունը:

Կազմակերպչական ընդունակություններն, իսկա-
կան ու խոշոր ճարտասանական տաղանդը, մասսայի
հետ լեզու գտնելու, նրան համոզելու, դեպի գործողու-
թյուն մղելու ընդունակությունը, բանվորական գոր-
ծին բուռն նվիրվածությունը բանվորական մասսաների
մեջ Մացեյսկու համար ստեղծում են բացառիկ հեղի-
նակություն, և 1920 թվի վերջում նա, քսան տարե-
կան յերիտասարդ աղջիկը, միաձայն ընտրվում է վե-
րին Սիլեզիայի կոմմունիստական կուսակցության
կենտրոնական կոմիտեյի անդամ:

Իսկ միքանի որից հետո նա կալանավորվում է
ու դրվում է Բիտոմի բանտի միայնակ կամերաներից
մեկում:

Առաջին գիշերը բանտում խաղաղ է անցնում:
Յերկրորդ որը, հարցաքննությունից հետո, կամերայի
դուռը, հակառակ գոյություն ունեցող կանոնադրու-
թյան, կիսաբաց է թողնվում:

Բանտի բակում թաղնված մարդասպաններն
սպասում են «բանտարկյալուհու փախստին», սակայն
Մացեյսկայան մնում է կամերայում:

Ուշ յերեկոյան այնտեղ են բերում չորս քրեյա-
կան հանցագործուհիների: Հետագան առայժմ մնաց
անհայտ, բայց քրեյական հանցագործուհիներին կա-
մերա ձգելու հետևանքը յեղավ Մացեյսկու մահը. ա-
ռավոտյան նրան կախված գտան:

ՌՈՒՄԻՆԻԱ.

ԹԱՄԱՐԱ ԿՐՅՈՒԶՈԿ.

1918 թվին նա առաջիններից մեկն է մտնում յերթառասարգության կոմմունիստական ընդհատակյա կազմակերպության մեջ:

Կալանավորվելով, նա դիմացկուն կերպով տանում է սոսկալի ծեծերն ու դատապարտվում 10 տարով առժանակիր աշխատանքի: Յերկրորդ դատավարության ժամանակ ազատվեց... Գալով Խորհրդային Ռուսաստան, նա շարունակ ձգտում էր յետ, դեպի ընդհատակյա աշխատանքը: Ընկերները չեյին թողնում նրան, գտնելով այդ աննպատակահարմար: Բայց և այնպես **Թամարան** գնում է Ռումինիա և միջանի որից հետո ընկնում ժանդարմների ճանկը: Վճռելով ընդմիջող վերջ տալ համառ բայլելիկուն, 1921 թվի դեկտեմբերի վերջին նրան միջանի ընկերների հետ «լրացուցիչ քննության» պատրվակով ուղարկում են Բենդերի, վորտեղ և սպանում են:

ԵՍՏՈՆԻԱ.

1920 թվի աշնանը Եստոնիայում հիմնվում է Բանվոր Յերթառասարգության Միությունը, վոր դեկտեմբերի 5-ին իր ընդհանուր ժողովում միաձայն միանում է Յերթառասարգության կոմմունիստական Ինտերնացիոնալին: Միությունը մասնակցում է ընտրական կամպանիաներին. միության պատասխանատու աշխատակիցները հանդիսանում են քաղաքային ինքնավարությունների անդամներ և մտնում Աղգային ժողովի և տեղական ինքնավարությունների մեջ: Նրանք աշխատում են նույնպես և ուրիշ միությունների մեջ: Չորս ամսից հետո միությունն ունենում է 1000 անդամ և 12 բաժին: Բուրժուազիային այդ բանը դուր չի գալիս:

Մայիսի 1-ին կառավարությունը հնարում է պրովոկացիոն միջոց՝ խորհրդի պրեզիդիումն ու տեղերի պատասխանատու աշխատակիցները կալանավորվում են:

Մեղադրական ակտը հաստատում է, վոր նրանք յեղել են կոմմունիստական անլեգալ կուսակցության գործիքը ու հրամաններ կատարողները և իրենց աշխատանքների մեջ ղեկավարվել են գոյություն ունեցող կարգի տապալման նպատակով:

Հետո մեղադրական ակտը հիմնվում է Պաուլ Ռաուդսենի ցուցմունքների վրա, վորը, ըստ գաղտնի վստիկանության հաստատումների, փախել էր Վեդենբերգի բանտից, բայց իրոք մեռնելու աստիճան ծեծված էր հենց նույն գաղտնի վստիկանության ձեռքով և

հենց դրա համար էլ դատավարութեանը ներկա չե: Խնչպես հաստատում ե մեղադրական ակտը, նրա մոտ գտնված նամակների ու կեղծ անունների մասին նրա տված ցուցմունքներից պետք ե հասկանալ այն, վոր վերոգրյալ կազմակերպութիւնները կապ եյին պահպանում կոմմունիստական անլեգալ կուսակցութեան հետ:

Բերված տվյալների հիման վրա Բանվոր Յերիտասարդութեան Միութեան հետեյալ անդամների վրա բարդվում ե մեղադրանք հետեյալ հանցագործութիւնների համար՝

1. **Գեվորգ Ռոբերտ**—Ազգային ժողովի կոմմունիստական ֆրակցիայի թեկնածու յեր և Ռեվելի քաղաքային ինքնավարութեան կոմմունիստական ֆրակցիայի անդամ. նա Բանվոր Յերիտասարդութեան Միութեան հիմնադիրներից մեկն եր:

2. **Հենրիխ Աուգերվալդ**—Ազգային ժողովի կոմմունիստական ֆրակցիայի սուրհանդակն եր և Բանվոր Յերիտասարդութեան Միութեան պրեզիդիումի անդամը:

3. **Սերգեյ Անգրեյեվ**—անդամ եր Ազգային ժողովի կոմմունիստական ֆրակցիայի, Ռեվելի քաղաքային ինքնավարութեան կոմմունիստական ֆրակցիայի անդամ և Բանվոր Յերիտասարդութեան Միութեան անդամ:

4. **Արսուր Նիսոն**—Բանվոր Յերիտասարդութեան Միութեան պրեզիդիումի անդամ եր:

5. **Յոհանն Յենգ**—Ազգային ժողովի կոմմունիստական ֆրակցիայի թեկնածու յեր, Բանվոր Յերիտասարդութեան Միութեան Ֆելլինի բաժնի հիմնադիրներից մեկը և Ֆելլինի գյուղական շրջանի հակապետական ագիտատորը:

6. **Երիկ Սաարենս**—Բանվոր Յերիտասարդութեան պրեզիդիումի անդամ եր և քարտուղարի ոգնական:

7. **Ռակար Սիլզ**—Բանվոր Յերիտասարդութեան Միութեան Յուրյեվի բաժնի անդամ. բաժինը նրա միջոցով Ռեվելի բաժնից ստանում եր կոմմունիստական անլեգալ կուսակցութեան Կ. Կ. հրահանգները:

8. **Պյոտր Միխեյլսոն**—Բանվոր Յերիտասարդութեան Միութեան Յուրյեվի բաժնի նախագահն եր:

9. **Մարտին Ռեյսեն**—Ազգային ժողովի կոմմունիստական ֆրակցիայի թեկնածու յեր և Բանվոր Յերիտասարդութեան Միութեան Ֆելլինի բաժնի հիմնադիրը:

10. **Հարոլդ Նայել**—Բանվոր Յերիտասարդութեան Միութեան Յուրյեվի բաժնի պրեզիդիումի անդամ:

11. **Վոլլգեմար Սասս**—Բանվոր Յերիտասարդութեան Միութեան Յուրյեվի շրջանի անդամ եր:

12. **Ռիխարդ Միրրինգ**—Բանվոր Յերիտասարդութեան Միութեան պրեզիդիումի անդամ եր, քարտուղար և անլեգալ կազմակերպիչ:

13. **Պետեր Լեմգո**—Բանվոր Յերիտասարդութեան Միութեան անդամ եր:

14. **Յոհանն Բեյա**—Բանվոր Յերիտասարդութեան Միութեան պրեզիդիումի անդամ եր և Պերնովի բաժնի հիմնադիրը:

15. **Վոլլգեմար Կանգուր**—Բանվոր Յերիտասարդութեան Միութեան պրեզիդիումի անդամ եր և Պերնովի բաժնի քարտուղարը:

ԸՆԿ. ՅԱՆ ԿՐԵՈՒԿՍ.

1923 թվի մարտի 28-ին Ռեվելի քաղաքի փողոցներից մեկում վարձու մարդասպանի ձեռքով ընկավ

Նստոնիւայի բանվորները ականաւոր առաջնորդ, ընդհատակյա աշխատավոր, Կոմկուսի Կ. Կ. և Նստոնիւայի Կոմյերիտմիութեան Կ. Կ. անդամ ընկ. ՅԱՆ ԿՐԵՈՒԿՍԵ:

Բատրակի վորդի, նա դեռ յերեկս ժամանակվանից ճաշակել եր բատրակի կյանքի բոլոր հրաշալիքները: Ավելի ուշ, իր ծնողների հետ փոխադրվելով քաղաք, 11 տարեկան հասակում մանուկ Կրեուկսը մտնում ե գլորոց, սակայն պատանի բանվորին կրթութեանը այնպես հեշտութեամբ չի հաջողվում, ինչպես բուրժուաների տղաներին: Նա ստիպված եր ոգնել հորը, գործարանի հասարակ բանվորներին, դասերից հետո թերթեր վաճառելով: Դպրոցը վերջացնելով, ընկ. Կրեուկսը մտնում ե փականադործի արհեստանոց իբրև աշակերտ, բայց վարպետի ճիպտի ճնշումները չտանելով, դուրս ե գալիս արհեստանոցից և մտնում ծովագնացների առևտրական նավը:

1911 թվին նա գնում ե Պետերբուրգ: Այստեղ նա հանդիպում ե ընկերներին, վորոնք նրան ծանոթացնում են բանվորների կազմակերպված պայքարի հիմնական խնդիրներին հետ:

Համաշխարհային պատերազմի սկզբում ընկ. Կրեուկսն յերթարկվում ե զորակոչի և ուղարկվում ավստրիական ճակատ: Յեվ հենց այստեղ ել վրա յե հասնում հեղափոխութունը. նա շտապում ե Նստոնիւա, վորտեղ մտնում ե բայլէիկների կուսակցութեան մեջ և ամբողջովին նվիրվում ե հեղափոխական աշխատանքի, նամանավանդ Նստոնիւայի Կենտրոնի կողմից Կարմիր բանակի կազմակերպմանը:

1918 թվին օկկուպացիոն բանդաները կուսակցական և խորհրդային հիմնաքկներին հարկադրում են

գաղթել խորհրդային Ռուսաստան, նրանց հետ միասին գնում ե և ընկ. Կրեուկսը, բայց վոչ յերկար ժամանակով:

1919 թվի սկզբներին նա արդեն վերադառնում ե և մտնում Ռեվելի յերկաթուղային դեպոն՝ իբրև հասարակ բանվոր, վորպեսզի հնարավորութեան ունենա յերկաթուղայինների մեջ պրոպագանդիստական աշխատանք կատարելու: Լավ ազդեցութեան կարող ե յեռանդուն աշխատանքի հետևանքը չդանդաղեց արտահայտվել. չի անցնում ե կես տարի, վոր մենշեիկները, վորոնք այն ժամանակ բանվորական գործում հսկայական ազդեցութեան ունեյին, Նստոնիւայի արհմիութեանների Լ-ին համագումարի ընտրութեանների ժամանակ ջարդված դուրս յեկան:

Նստոնիւայի Կոմկուսի առաջին համագումարում (ընդհատակյա), 1920 թվին ընկ. Կրեուկսն արդեն ընտրվում ե Կ. Կ. անդամ ու քննում նրա մեջ մինչև իր մահը: Ընկեր Կրեուկսն անմոռանալի առաջնորդ ե հանդիսանում նաև Նստոնիւայի Կոմմունիստական յերիտասարդութեան համար, վորի կազմակերպութեան համար դրեց իր ամբողջ յեռանդը: 1921 թվին նա կազմակերպում ե կոմյերիտականների ընդհատակյա անդառանիկ բջիջները, և կարճ ժամանակից հետո նրա դեկավրութեամբ ամբողջ յերկրում աճում են այդ բջիջները, վորոնցից կազմակերպվեց Նստոնիւայի Կ. Յե. Մ.-ը, վորի հոգին եր Կրեուկսը: Նրա դեկավրութեամբ ել անց ե կացել Նստոնիւայի Կոմյերիտմիութեան անդրանիկ համագումարը:

Լ Ի Տ Վ Ա

1921 թվի ոգոստոսին գաղտնի վոստիկանությունը պրովոկատորի ոգնությամբ Կոմիտյուն (Լիտվա) կալանավորեց ընկեր Բորիսին (Աբրահամ Ռոզենֆելդին)։ Նրան մեղադրում էին Լիտվայի Կ. Յե. Մ. Կ. Կ. գաղտնի տպարանի կազմակերպության մեջ, վոր հայտնաբերված էր։

Նախքան ընկեր Բորիսի դեմ վորեւե մեղադրանք առաջ բաշելը, նրան 17 որ շարունակ պահեցին «շվալ-գիրայի» (գաղտնի վոստիկանության) նկուղներում։ Նրան գրեթե կերակուր չէին տալիս և տանջում էին սարսափելի կերպով։ Ամեն որ նա յենթարկվում էր ծեծի։ Ծեծում էին նրան հրացանի ձողով, ճիպոտներով և ատրճանակներով։ Ծեծով կամենում էին նրան ստիպել, վոր նա մատնի կուսակցական յերկրորդ տպարանը։ Ընկեր Բորիսը չժխտեց այն, ինչ վոր պարզ էր նրա մոտ բռնված նյութից—վոր նա Լիտվայի Կոմմունիստական Կուսակցության ամբաստանող է և Յերիտասարդության Կոմմունիստական Միության ակտիվ աշխատողն է։ Չնայած այն վոչ-մարդկային տանջանքներին, վորին յենթարկեցին նրան «գեմոկրատական» հանրապետության դահիճները, չնայած նրան, վոր ընկեր Բորիսն այդ տանջանքի ժամանակ միջանի անգամ իրար յետևից կորցրեց գիտակցությունը, տպարանը մատնելու պահանջին նա պատասխանեց արհամարհական ժպտով։

Սկզբում ընկ. Բորիսը հանձնվեց զինվորա-դաշտային դատարանին։ Նրա դեմ հանած միակ մեղա-

դրանքը կոմմունիստական կուսակցության պատկանելին էր։ Զինվորա-դաշտային դատարանը դատապարտեց ընկ. Բորիսին մահվան պատժի գնդակահարության միջոցով։ Ընկեր Բորիսը դահիճներին չխնդրեց խնայել իրեն. նա անգամ ավելորդ համարեց վերադառնալ գանդատ տալ գերագույն տրիբունալին։ Միայն Կ. Կ. յեռանդագին առաջարկության պատճառով 1922 թ. մայիսի 6-ին նա վերադառնության գանդատ տվեց։ Գործը փոխադրվեց գերագույն տրիբունալ։ Մեղադրյալների աթոռի վրա ընկ. Բորիսը ֆնաց ճշմարիտ հեղափոխական. իրեն պաշտպանելու փոխարեն նա հայտարարեց, վոր չի ճանաչում բուրժուական դատարանը։

Նա մեղադրանք հարուցեց վոչ միայն ծախու, յերեսպաշտ դատարանի դեմ, այլ և ամբողջ արյունոտ սխտեմի դեմ, վորը շղթաների մեջ է պահում բանվորներին և մանր գյուղացիությունը։ Գերագույն տրիբունալը փոխեց մահվան դատավճիռը և դատապարտեց նրան 15 տարվա տաժանակիր աշխատանքների։

Թե ինչպես դիմավորեց ընկ. Բորիսը բուրժուական դատարանի վճիռը, յերևում է նրա յեզրափակման խոսքից.

«Յես այստեղ չեմ յեկել պաշտպանվելու, վորովհետեւ յես հանցագործ չեմ և յերբեք ինձ այնպիսին չեմ համարի։ Յես իմ դասակարգի դավալն եմ—պրոլետար, յես կոմմունիստ եմ և անգամ Լիտվայի Կոմմունիստական կազմակերպության։

Բանվոր յերիտասարդությունն արդեն վաղուց է հասկացել, վոր միայն բանվոր դասակարգի հաղթությունը բուրժուազիայի դեմ բաց կանի ազատագրման հնարավորություն, մարդկային պայմանների, կյանքի

և աշխատանքի հնարավորութիւն: Յեւ յերիտասարդութիւնը պայքարի յեւալ:

Բանվորներէց զուր գաղանային վայրագությամբ եք վրեժ առնում: Յեւ սեփական կաշվիս վրա յեմ փորձել, թե ինչ ե նշանակում ձեր տանջանքը: Ինձ 17 որ պահեցին «շվալգիրայի» նկուղում: Ինձ ծեծում էյին խարազանով, թրով, ատրճանակով և բռունցքով, խփում էյին կրծքիս, փորիս և գլխիս: Այդ կատարվում էր որական 2-3 անգամ, քանի յեւ այնտեղ էյի: Դաշտային դատարանը ինձ դատապարտեց մահվան: Կոմունիստին դրանով չեւ վախեցնի: Այդ ճանապարհով դուք չեք խուսափի անխուսափելիից, մենք մենակ չենք, մեր յետեւ են մասսաները: Մենք—դա բանվոր դասակարգի հսկայական և հզոր մասսան ե:

Թող ընկնի մեկը, ձեզնից խփվածը. նրա տեղն իսկույն կկանգնի մյուսը, յերբորդը:

Հրով և սրով չեք կարող կոխատել պրոլետարիատի դրոշակը:

Վհչ, խստութիւններով դուք չեք կարող վախեցնել:

Տանջեցեք, գնդակահարեցեք, բանտերը լիքը լցրեցեք, սակայն դուք չեք, վոր պիտք ե կասեցնեք պատմութիւն շոգեշարժը:

Ինչպեւս վրա թռչող փոթորիկ նա կգլորի իր ճանապարհի վրա կառուցված բոլոր արգելքները:

Ինչ լինելու յե, անխուսափելիորեն կլինի:

Պատմութիւնը մեր կողմն ե»:

ՖԻՆԱՆՏԻԱ.

1918 թվի հեղափոխութիւնից հետո Ֆինլանդիայի հեղափոխական բանվոր յերիտասարդութիւնը բուրժուազիայի ամենավայրագ խստութիւնների և գաղանական բռնութիւնների զոհը դարձավ: Ֆիննական բանվոր յերիտասարդութիւնն ավանգարդն ամեն մի տարի զրկվում էր իր ընտիր մարտիկներից, իր ամենափորձված, ամենաանվեհեր աշխատավորներից, վորոնք զոհ էյին դառնում սպիտակ տերրորին: Առանսարդութիւն Միութիւնը: Բայց ինչո՞ւ համար—նրա համար, վոր 1918 թվի գարնանը ֆիննական հեղափոխութիւնն արյունոտ ճնշումից հետո նա առաջինը վերականգնեց իր գործունեութիւնը, նրա համար, վոր նա առաջին շարքերում կռվում էր բուրժուազիայի դեմ պրոլետարական հեղափոխութիւնն համար:

Հեղափոխութիւնը ճնշելու ժամանակ առանցքնութիւն գնդակահարվեցին հաղարավոր բանվորներ, վորոնց թվում ճնշող մեծամասնութիւնը յերիտասարդութիւնից էր, իսկ առանձնապե՛ս յերիտասարդ աղջիկներից (զենք կրող բոլոր կանայք տեղն ու տեղը գնդակահարվեցին): Պետական դատարանի կողմից դատապարտված 67,788 բանվորներից 33,7⁰/₁₀ յերիտասարդութիւնն էր:

Դատապարտված կանանց մեջ 47,1⁰/₁₀ 21 տարեկանից փոքր էր: Այս ապացուցում ե, թե ֆիննական յերիտասարդութիւնը հեղափոխութիւնն առաջ ինչպեւս կա-

տարեց իր պարտականութիւնը, և ինչպես նրան անսահման առում եր բուրժուազիան: Շատ տասնյակ հազարավոր ղնդակահարված պրոլետարների կողքին 1918 թվին դատական մարմինները բանվորների համար բանտարկութեան վճիռներ հանեցին քնդհանուր գումարով 300,000 տարի: Այս դեռ բավական չէ, այն ժամանակ թաղավորում եր սանձարձակ վոստիկանական տերրորը:

Թեև բանվորների կորուստներն այնքան մեծ էին, թեև բանվորական կազմակերպութիւնների ամբողջ գործունեութիւնն արգելված եր, և բուրժուազիան, կազմակերպելով կատաղի տերրոր, աշխատում եր ամեն կերպ կործանել բանվորական շարժումը, — Յերիտասարդութեան Սոցիալ-Դեմոկրատական Միութիւնը (այն ժամանակ այսպես եր կոչվում Ֆինլանդիայի Կ. Յե. Մ.) դեռ 1918 թվի աշնանը նորից ծավալեց իր գործունեութիւնը և հենց սկզբից կոմունիստների կողմն անցավ: Իր աշխատանքը վերականգնելուց հետո Միութիւնն իսկույն ևեթ ցույց տվեց իր հեղափոխական բնույթը: Նրանից առաջ չեկավ Ֆինլանդիայի Կ. Կ. հեղափոխական ավանդարդը: Նա բացարձակ հրավեր շարտեց բուրժուազիային և սոցիալ-դեմոկրատիային: Յեվ դրա համար ել բուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատիայի ուժն առաջին հերթին նրանց դեմ ուղղվեց: Սկսվեցին անդադար հալածանքներ: Սկզբում խտութիւնները պարզ կերպով չուղղվեցին Միութեան դեմ, վորպես կազմակերպութեան, ալ ուղղվեցին նրա ընտիր աշխատավորներին, վորոնցից շատերը բանտ նետվեցին:

1921 թվի փետրվարին, նրանից հետո, յերբ Մի-

ութիւնը վորոշեց հարել ԿիՄ-ին, սոցիալ-դեմոկրատիայի ակտիվ գործակցութեամբ հալածանքներ սկսվեցին հենց նրա դեմ ևս, վորպես կոմունիստական կազմակերպութեան: Սոցիալ-դեմոկրատներն իշխանութիւններին մատնացույց էին անում. «Ահա ամբողջ չարիքի արմատը: Պատանեկան Միութիւնը — դուռ կոմունիստական կազմակերպութիւն և: Ինչո՞ւ յեր թույլ տալիս նրան աշխատել: Վոչնչացրեք նրան»: Յեվ իշխանութիւններն լսեցին սոցիալ-դեմոկրատներին: 1921 և 1922 թվականներին Միութեանը զրկվեց իր ամենափորձված աշխատավորներից: Սակայն այդ չկարողացավ խանգարել կազմակերպութեան աշխատանքը: Ընդհակառակը, բանվոր յերիտասարդութեան մասնանքը իրենա Միութեան տեսնում էին իրենց դեկավարին և լցվում էին նրա շարքերը, այնպես վոր նրա անդամների թիվն անշեղ կերպով աճում եր: Միութեան որդան «Յերիտասարդ Բանվորը» միջանի անգամ յենթարկվեց բռնադրաման, իսկ նրա պատասխանատու խմբագրին միջանի անգամ տաժանակիր աշխատանքների դատապարտեցին:

Յերբ բուրժուազիան և սոցիալ-դեմոկրատիան տեսան, վոր Միութեան ընտիր աշխատավորների ու նրա դեկավարների բնաջնջումով անկարելի յե խանգարել նրա աշխատանքը, նրանք հարվածն ուղղեցին Միութեան դեմ, վորպես կազմակերպութեան, և 1923 թվի ապրիլին ցրեցին այն միայն նրա համար, վոր նա մտնում եր Յերիտասարդութեան կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ: Սակայն բուրժուազիայի այդ հարվածն ել մահացու չեղավ Ֆիննական հեղափոխական յերիտասարդութեան համար, վորովհետև Միութիւնը

ցրելուց հետո մի շարք ֆիննական կոմյերիտական աշխատավորներ իսկույն ինքն կազմակերպեցին նոր միություն—Ֆինլանդիայի Յերիտասարդության Սոցիալիստական Միություն, վորը նորից համախմբեց ցերեցան պատանեկան մասսաներին ու վերանորոգեց պայքարը:

Բուրժուազիան, չնայած վոր պատանեկան միությունը ցրել էր, չկարողացավ կործանել պատանեկան հեղափոխական շարժումը և նոր միջոցներ վորոնեց այդ նպատակին հասնելու համար: Այս անգամ նա իր հարվածն ուղղեց Ֆինլանդիայի Բանվորական Սոցիալիստական կուսակցության դեմ: 1923 թվի ոգոստոսի 3-ին ֆիննական պրոլետարիատի այս հեղափոխական կուսակցության անդամների մեջ մասսայական ձերբակալումներ կատարվեցին: Բանտարկվեցին 200-ից ավելի կուսակցական ակտիվ աշխատավորներ, նրանց թվում և Ֆինլանդիայի Ս.Ջ. Կ. վոլջ Կ. Կ., Շվեդական քարտուղարությունը, կուսակցության պարլամենտական ամբողջ ֆրակցիան, նահանգական կոմիտեները, կուսակցական թերթերի խմբագիրներ ու շատ ուրիշ աշխատավորներ: Միաժամանակ արգելվեցին բոլոր կուսակցական որգաններն ու բռնագրավվեցին կուսակցական տպարանները: Պատանեկան միության որգանը նույնպես փակվեց: Թեև բուրժուազիայի այս հարվածն անմիջապես պատանեկան շարժման դեմ չէր ուղղված, բայց Յերիտասարդության Միությունը նրա ամբողջ ծանրությունն իր վրա զգաց: Շնորհիվ բանտարկությունների, Միությունը զրկվեց իր քարտուղարներից (Ուրիե Լախսի-ճեճից և Ո. Լուսգրեդից) և շատ ամենաակտիվ աշխատավորներից, այնպես վոր նորից հարկ յեղավ նահանգական կոմիտեները կազմակերպել:

Բացի փոքրաթիվ ընկերներից, բոլոր բանտարկված ընկերները դատապարտվեցին տաժանակիբ աշխատանքների 3-ից մինչև 12 տարի ժամանակով:

Չնայած դրան, Միությունը նորից աշխատանքի անցավ:

Պատանեկան անլեզալ կուսակցական շարժումն իր քայքայված շարքերը վերականգնելու համար գործեր դնում իր բոլոր ջանքերը: Յեվ յեթե չհաշվենք հատուկենտ բանտարկությունները, այդ աշխատանքը համեմատաբար հանգիստ էր ընթանում:

Բայց այժմ թերթերը հաղորդում են յերկրում տեղի ունեցող նոր մասսայական ձերբակալությունների և խուզարկությունների մասին: Համաձայն ապացուցված տեղեկությունների, Հելսինգֆորսում և Վիբորգում արդեն բանտարկված են մոտ 20 ղեկավար կուսակցականներ և կոմյերիտական աշխատավորներ: Ըստ նույն լրագրական տեղեկությունների, ձերբակալությունները շարունակվում են, և դա ստիպում է մտածել, վոր կուսակցությունը և Յերիտասարդության Միությունը մեծ կորուստներ կտան: Ձերբակալություններն առանձնապես ծանր կազմեն Յերիտասարդության Միության վրա, վորովհետև նա հանդիսանում է հեղափոխական պրոլետարիատի ամենաակտիվ շերտը, և հեղափոխական շարժման մեջ կոմյերիտականները կատարում են ամենախարեւոր ֆունկցիաներ: Խնչպես մենք տեսնում ենք, Ֆինլանդիայի Յերիտասարդության Կոմմունիստական Միությունը բուրժուազիայի սպիտակ տերրորի յերկաթե կրնկի տակ մեծ զոհեր տվեց: Բայց այդ չկարողացավ ջլատել նրա աշխատանքը:

Ֆինլանդիայի հեղափոխական յերիտասարդությունը շարունակում է իր դործը և անվեհեր կերպով կհասցնի հաղթական վախճանի: Հալածանքներն ու խստությունները ֆիննական պրոլետարական յերիտասարդական լայն մասսաներին ցույց են տալիս ուղիղ ճանապարհը: Սոցիալ-դեմոկրատները կողմից այդ հալածանքներին ցույց տված ոժանդակությունը այդ դավաճաններից շարունակ նորանոր բանվորական մասսաներ և խումբ և նրանց հրում դեպի հեղափոխության բանակի շարքերը: Իսկ այդ բանակն իր ժամանակին արյունարբու բուրժուազիայի հետ կմաքրի իր հաշիվը:

Պեկկա Պասսոնեն,

Ֆերիտասարդության կոմիտեների
Գործկոմի անդամ:

ՅԱՊՈՆԻԱ.

ՅԵՍԻՏՈՐՍ, ԿԱՎԱՅ.

Նա հասարակ բանվոր է: Պատանեկան հասակից նա արդեն մասնակցում է բանվորական շարժմանը: Նա մեկն է լեռնաշխատավորների արհմիության կադմակերպիչներից և դեռ բոլորովին յերիտասարդ պատանի լինելով, դեկավարում է խոշոր գործադուլը:

Նրա գործունեյությունը շուտով զրգովում է վտարիկանության ուշադրությունը, և նրան կալանավորում ու դատապարտում են վեց ամսով բանտարգելության: Սակայն վճիռը նրան չի վախեցնում, ու նա ել ավելի յեռանդով ընկղմվեց բանվորական շարժման մեջ:

Յապոնական բուրժուազիան կամենում է դպրոցների ուղղմանացում (միլիտարիզացիա) անցկացնի, իսկ հեղափոխական ուսանողությունն այդ փորձին պատասխանում է հակամիլիտարիստական հակաշական ցույցով, վորի կազմակերպիչն ու ղեկավարը հանդիսանում է ընկ. Կավայը:

1923 թվին յապոնական յերիտասարդությունն առաջին անգամ կամեցավ տոնել Միջազգային Ֆերիտասարդական Որը, և զլիափոր կազմակերպիչը դարձյալ ընկ. Կավայն էր: Ֆերիտասարդության այդ շարժման դեմ բուրժուական մամուլը լայն պայքար է բաց անում, բայց յերիտասարդությունը շարունակում է պատրաստվել Համաշխարհային Ֆերիտասարդական Որվա,

Ինտերնացիոնալիզմի այդ հանդիսավոր տոնի համար, Բայց սեպտեմբերի 2-ին, յերբ պետք է կայանար Միջազգային Ֆերիտասարդական Որը, Յապոնիայի գլխին պայթեց չեղած յերկրաշարժը, Շատ հազարներ, տասնյակ հազար մարդիկ մեռնում են փլատակների տակ, տասնյակ հազարներ զրկված են հացից, և ոգնության շտապելու փոխարեն յապոնական բուրժուազիան ոգտվում և ընդհանուր իրարանցումից, վորպեսզի վոչնչացնի հեղափոխական շարժումը:

Այդ որերում վարձու մարդասպանների ձեռքով բնաջնջվեցին յապոնական ընտիր հեղափոխականները, ուր զոհերի թվումն էին նույնպես ընկ. Կավայը և մի ուրիշ կոմյերիտական: Հանձինս նրանց յապոնական կոմմունիստական յերի ոստարդությունը զրկվեց իր լավագույն մարտիկներից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԵՃ
ԿիՄ-ի հերոսներն ու նահատակները— Ռ. Մերիցզ.	3
Գերմանիա	15
Ֆրանսիա	23
Ռուրի շրջան— Հարրի	24
Հունգարիա	39
Իտալիա— Ջուզեպպե Բերսի	49
Բուլղարիա	57
Լեհաստան	64
Ռումինիա	74
Եստոնիա	75
Լիտվա	80
Ֆինլանդիա— Պեկկա Պասսոնեն	83
Յապոնիա	89



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0209012



ԳԻՆԸ 25 ԿՈՊ.